ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ աջակցությամբ

5 (38)

ԵՐԵՎԱՆ

2013

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (38), 2013

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թնիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սևակ Սարուխանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

Վարդան Հարությունյան
«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Սևակ Սարուխանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արա Մարջանյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Սերգեյ Սարգսյան
Տիգրան Հարությունյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (38), 2013

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱ

Լեոն Հովսեփյան
Գյուլենական շարժումն Ադրբեջանում.
ներկա իրավիճակն ու միտումները 5

Հայկ Գաբրիելյան
PKK-ի դեմ Թուրքիայի պայքարը
ներքաղաքական և արտաքին քաղաքական ոլորտներում 15

ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Սերգեյ Սարգսյան
Հետխորհրդային պետությունների ինտեգրացիոն
հեռանկարները Ղրղզստանի և Ուկրաինայի օրինակով
(ակնկալիքներ և մտավախություններ) 26

Լուրեր 34

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Արեստակես Սիմավորյան
Ստամբուլի հայ կաթողիկե համայնքի դպրոցները 37

Վահրամ Հովյան
Հայկական սփյուռքի փոխակերպումը.
մարտահրավերներ և հնարավորություններ 43

Գրիգոր Գրիգորյան
Ռուսաստանը Հայաստանի հանրային ընկալմամբ 51

Էդուարդ Լ. Դանիելյան
Գարեգին Նժդեհի խոհերը
հայոց անկախ պետության վերականգնման մասին 58

Լուրեր 65

Հուշագիր հեղինակին 67

Ադրբեջան և Թուրքիա

ԳՅՈՒԼԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

*Լևոն Հովսեփյան**

2013թ. հունվարի 21-ին Կազանում Ռուսաստանի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպվել էր կլոր սեղան Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՀ երկրներում նուրջիզմի կամ գյուլենական շարժման տարածման ու ազդեցության վերաբերյալ: Գյուլենական շարժումը բավական ակտիվ է ինչպես Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, այնպես էլ ՌԴ մի քանի սուբյեկտներում, հատկապես Թաթարստանում և Բաշկորտոստանում[1]: ՌԴ իրավապահ մարմինները բավական լուրջ հսկողության տակ են պահում այդ շարժման հաստատություններն ու կազմակերպությունները: Դեռևս 2002թ. ՌԴ Անվտանգության դաշնային ծառայությունը (ԱԴԾ) հայտարարել էր, որ ՌԴ տարածքում դադարեցվել է թուրքական «նուրջու» կրոնական շարժման գործունեությունը: ԱԴԾ տնօրեն Ն.Պատրուշևը հայտարարել էր, որ այդ շարժման կողմից ստեղծված ֆոնդերն ու հաստատությունները զբաղվել են հետախուզական գործունեությամբ, իրականացրել պանիսլամական ու պանթյուրքական քարոզչություն: 2007թ. ապրիլին ՌԴ Գերագույն դատարանը արգելեց Ֆ.Գյուլենի ղեկավարությամբ գործող «Նուրջու» կրոնա-քաղաքական շարժման գործունեությունը

* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող:

[1] Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, http://www.riss.ru/?activityId=152.

ՌԴ տարածքում: Ըստ ռուսական լրատվամիջոցների՝ ՌԴ-ում այն բավական լավ կազմակերպված ինստիտուցիոնալ ցանց է ունեցել, և դրանք գործել են «Սերիաթ», «Էֆլաք», «Թորոս», «Թոլերանս», «Ուֆուք» կոչված հիմնադրամների անվան տակ [1, էջ 29-30]:

2013թ. մարտի սկզբներին ՌԴ ԱԴԾ-ի կողմից Ս.Պետերբուրգում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվեցին ու ձերբակալվեցին «Նուրջու» կրոնական շարժման 10 անդամներ, որոնցից 4-ը՝ Ադրբեջանի քաղաքացիներ: Նրանցից առգրավվեց ՌԴ ողջ տարածքում արգելված կրոնական բովանդակությամբ գրականություն (թուրքերեն ու ռուսերեն լեզուներով): Ըստ ռուսական հատուկ ծառայությունների՝ «Նուրջու» կրոնական շարժման գործունեությունն առանձնանում է նրանով, որ սերտ կապերի մեջ է թուրքական հատուկ ծառայությունների հետ և գործում է hօգուտ թուրքական հետախուզության[2]:

Գյուլենական շարժումը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես ԱՊՀ տարածքի թյուրքալեզու երկրների վրա: Միայն Կենտրոնական Ասիայի երկրներում և Ադրբեջանում 1997-1998թթ. դրությամբ գյուլենական դպրոցների թիվը գերազանցում էր 8 տասնյակը [2, էջ 105-107]: Ժամանակի ընթացքում, սակայն, Կենտրոնական Ասիայում գործող դպրոցների թիվը զգալիորեն նվազեց: Նախ, Ուզբեկստանի իշխանությունները, անընդհատ վտանգ զգալով իսլամական հոսանքների ու շարժումների տարածումից, փակեցին գյուլենականների դպրոցները, իսկ Թուրքմենստանում դրանք վերջին տարիներին պետականացվեցին: Ադրբեջանում գյուլենականների հիմնած դպրոցները մինչև օրս շարունակում են գործել[3]:

Շարժման արտաքին ծավալումը խրախուսվել է Թուրքիայի Հանրապետության կողմից՝ նաև այն ժամանակ, երբ իշխանության

[2] Взяли с прочитанным, http://www.rg.ru/2013/03/05/extreme.html.

[3] Саид Нурси и Фетхуллах Гюлен в Центральной Азии: влияние на религию и образование после распада СССР, http://www.fergananews.com/articles/7598.

ղեկին աշխարհիկ ուժերն են եղել: Եվ դա տեղավորվում էր Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակների մեջ: Տվյալ պարագայում գյուլենական շարժումը կարելի է դիտարկել բուն Թուրքիայի գաղափարական-մշակութային հեգեմոնիայի տեսանկյունից: Այն արտաքին քաղաքականության իրականացման կարևորագույն գործիքներից է համարվում, հատկապես թյուրքալեզու հանրույթների հետ հարաբերությունների հարցում: Շարժումն արտաքին քաղաքականության մեջ «փափուկ ուժի» (*soft power*) կիրառման կարևոր գործիքակազմից էր դիտարկվում:

Ադրբեջանի անկախացումից հետո գյուլենական շարժումը կամ, ինչպես ընդունված է՝ նուրջու ուսմունքն սկսեց ակտիվորեն ներթափանցել այդ երկիր և բավական արագ կարողացավ հիմնել իր բջիջները՝ տարբեր հաստատությունների անվան ներքո: Դա պայմանավորված էր նախ և առաջ երկրի նախկին նախագահ Հեյդար Ալիևի բարյացակամ վերաբերմունքով, քանի որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ղեկավար եղած ժամանակ գյուլենական շարժումը նրան բավական լուրջ օգնություն էր ցուցաբերում: Նորանկախ Ադրբեջանի իշխանությունների համար այդ շարժման գործունեությունը դիտարկվում էր որպես կարևոր գործոն Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման համար, հատկապես կրթական-մշակութային մոդելի համատեքստում [3]: Ներկայում էլ այդ շարժումն ամենաակտիվներից է Ադրբեջանում և շարունակական ազդեցության մեծացման միտումներ ունի: Գյուլենական շարժման գործունեությունն Ադրբեջանում, կարելի է ասել, քողարկված է և ուղղակի հակամարտության չի գնում շիական կրոնական համակարգի ու աշխարհիկ վարչակարգի հետ: Շարժման գործունեության հիմքում դրված է դանդաղ ու փափուկ գործունեության սկզբունքը, ինչն ավելի արդյունավետ է: Գյուլենական շարժման մեծ օրակարգը Ադրբեջանում պետական ու կրթական համակարգում տարածվելն է, ազդեցու-

թյան ձեռքբերումը: Ներկայում Ադրբեջանում գործում են գյուլենական աղանդին պատկանող *«Qafqaz»* համալսարանը, ինչպես նաև 12 միջնակարգ դպրոցներ ու վարժարաններ Բաքվում, Սումգայիթում, Մինգեչաուրում, Ղուբայում, Նախիջևանում և այլ քաղաքներում, 11 բուհական նախապատրաստական դասընթացներ, որոնցում ուսանողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 5000 [4]: Գործում են *«Xazar»* ռադիո-հեռուստատեսությունը, *«Samanyolu»* հեռուստաալիքը, *«Burc»* ռադիոն, հրատարակվում են *«Zaman»* օրաթերթը, մի շարք թերթեր ու պարբերականներ: Ակտիվ են նաև հասարակական և գործարար ոլորտի ընկերություններն ու կազմակերպությունները: Ներկայում հստակ տվյալներ չկան Ադրբեջանում նուրջու հետևորդների թվաքանակի վերաբերյալ: Ադրբեջանական ԶԼՄ տեղեկությունների համաձայն՝ նրանց թվաքանակն անցնում է 40 հազարը: Ադրբեջանցի հետազոտող Ա.Յունուսովն իր աշխատության մեջ նշում է, որ դաշտային ուսումնասիրությունների համաձայն՝ նրանց թիվն Ադրբեջանում հազիվ թե գերազանցի 10 հազարը [5, с. 50]:

Ադրբեջանում գյուլենական շարժումը լայնորեն տարածվում է հատկապես քաղաքային բնակչության շրջանում՝ շնորհիվ իր լավ կազմակերպված կրթական, լրատվական ու գործարար կազմակերպությունների և դրանով իսկ իր հնարավորություններով տարբերվում է մյուս իսլամական ուղղություններից, որ փորձում են ազդեցություն ձեռք բերել այդ երկրում: Այն նաև, ի տարբերություն այլ իսլամական ուղղությունների, ուղղակիորեն կամ բացահայտ չի ներգրավվում Ադրբեջանում կրոնի տեղի ու դերի վերաբերյալ քաղաքական սուր քննարկումներին [3]: Գյուլենական շարժումը գրավիչ է հատկապես Ադրբեջանի երիտասարդության շրջանում՝ իր չափավոր իսլամական ու պանթյուրքական գաղափարներով՝ որպես այլընտրանք ու հակակշիռ Բաքվի աշխարհիկ ռեժիմին ու ծայրահեղ վահաբականությանը կամ էլ իրանական շիականությանը [3]:

Գյուլենական շարժումն Ադրբեջանում բավական ակտիվ է և լուծում է մի քանի խնդիր: Նախ, այդ շարժումն առավելապես աչքի է ընկնում, այսպես ասած, իսլամական ու թուրքական օրակարգով, այսինքն՝ նրա գործունեության մեջ շաղկապված են իսլամական ու թուրքական ազգայնականությունը կամ այլ կերպ՝ թուրք-իսլամական համադրությունը: Մյուս կողմից՝ Թուրքիան նաև խրախուսում է այդ շարժման ծավալումն Ադրբեջանում՝ որպես հակադրություն իսլամական մյուս ուղղություններին՝ վահաբականությանը, և որ ամենակարևորն է՝ այդ երկրի համար ավանդական համարվող շիականությանը, որը դիտարկվում է որպես իրանական ազդեցության լուրջ գործոն: Տվյալ պարագայում գյուլենական շարժումն ունի նաև հստակ քաղաքական շարժառիթներ:

Գյուլենականությունն Ադրբեջանում ունի մի կարևոր առանձնահատկություն. այն բավական զգուշավոր և հարաբերականորեն պասիվ է գործում զուտ կրոնական տեսանկյունից՝ խուսափելով բացահայտ առճակատման մեջ մտնել աշխարհիկ կարգերի ու շրջանակների հետ, քանի որ իշխանական վերնախավն իրեն նույնպես աշխարհիկ է համարում: Չնայած հենց ադրբեջանական մի շարք հրապարակումներ են եղել, որոնք փաստում են, որ դա միայն արտաքուստ է և այդ շարժման օրակարգն ավելի կրոնական է, քան թվում է առաջին հայացքից: Նույնիսկ որոշ ադրբեջանցի փորձագետներ նշում են, որ այդ շարժումն Ադրբեջանում ցանկանում է շիականությունը փոխարինել սուննիական ուղղությամբ, այն էլ՝ թուրքական: Չնայած ադրբեջանական իշխանությունների կողմից գյուլենականների դեմ գործադրվող ճնշումներին՝ Ադրբեջանում այն գնալով ավելի է ընդլայնում իր գործունեությունը կարևորագույն ոլորտներում: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ շարժման հետ ուղղակի կամ անուղղակի կապի մեջ են Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներ, պատգամավորներ, հայտնի լրագրողներ ու կրթու-

թյան ոլորտի ներկայացուցիչներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ.Մեհթիևի որդիները սովորում էին գյուլենական ուսումնական հաստատություններում: Ըստ Ադրբեջանական մշակույթի զարթոնքի և զարգացման հիմնադրամի տնօրեն Շամիլ Թաղիևի՝ գյուլենական շարժումը լայնորեն տարածվում է նաև Ռուսաստանի ադրբեջանցիների շրջանում: Մոսկվայում նուրջիզմի ակտիվ քարոզչությամբ է զբաղվում Ռուսաստանի ադրբեջանցիների համերաշխության կենտրոնի ղեկավար Նամիգ Շահիֆելենգովը, նուրջուների թիրախում են հիմնականում ռուսաստանյան հեղինակավոր բուհերում սովորող ադրբեջանցի ուսանողները: Նրանք իրենց հիմնական շեշտադրումները կատարում են ադրբեջանական այն շրջանակների վրա, որոնք պետական ու գործարար շրջանակներում հետագայում կարող են զբաղեցնել պատասխանատու պաշտոններ[4]:

Չնայած նախկինում գյուլենական շարժումն Ադրբեջանի իշխանությունների համար, որպես այդպիսին, սպառնալիք չի ներկայացրել երկրում իսլամական արժեհամակարգի տարածման ու աշխարհիկ կարգերի տեսանկյունից, ներկայում իրավիճակն այդ առումով որոշակիորեն փոխվում է: Հատկապես Իլհամ Ալիևի կառավարման տարիներին, երկրի քաղաքական կյանքում իսլամական գործոնի դերի մեծացմանը զուգահեռ, փոխվեց նաև իշխանությունների վերաբերմունքն այդ շարժման նկատմամբ, և սկսեցին հետապնդումներ ու ձերբակալություններ [4, с. 49]: Շարժման միջոցով ադրբեջանական հասարակության որոշ շրջանակներ ավելի են հակվում դեպի կրոնական պահպանողական արժեհամակարգը, և այս պարագայում ընդհանուր իսլամական արժեհամակարգի տարածման ու ազդեցության գործոնը կարող է պարարտ հող ստեղծել ավելի արմատական ուղղությունների գործունեության համար, ինչպիսին է, օրինակ, վահա-

[4] Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, http://www.riss.ru/?activityId=152.

բականությունը: Ադրբեջանի համար ընդհանրապես կրոնական օրակարգը ժամանակի հետ կարող է ավելի վտանգավոր դառնալ: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է իսլամական մի քանի ուղղությունների միաժամանակյա տարածմանն ու հաստատմանն այդ երկրում: Արտաքին ուժերով պայմանավորված՝ իսլամական մի քանի ուղղություններ տարածում են գտնում Ադրբեջանում[5]: Մի կողմից՝ պետական շիական ուղղությունն է, որը հիմնական կրոնական ուսմունքն է, մյուս կողմից՝ հատկապես երկրի հյուսիսում ազդեցություն հավաքող սալաֆիականությունը և ծայրահեղական այլ ուղղություններ: Գյուլենական շարժումն իր հերթին տարածում է թուրքական հանաֆիական մազհաբի սուննիական ուղղությունը, որն ավելի չափավոր է և նպատակ ունի որոշակիորեն կանխել նաև ծայրահեղական ուղղությունների հետագա տարածումը: Նաև սրանով կարելի է բացատրել Ադրբեջանի իշխանությունների որոշակի հանդուրժողականությունն այդ շարժման հանդեպ, չնայած արդեն ցուցաբերում են զգուշավորություն և նաև ցուցադրական գործողություններ, ինչպես, օրինակ, վերջին մի քանի տարիներին իրականացված ձերբակալությունները: Ըստ ամերիկյան հեղինակավոր վերլուծական *«Stratfor»* կազմակերպության՝ հենց այդ երեք հիմնական իսլամական ուղղություններն ու շարժումն են, որ կարող են սպառնալիք ներկայացնել Ադրբեջանի համար[6]: Այդ երկրի կրոնական արդեն խորացող խայտաբղետությունը ժամանակի հետ կարող է դառնալ վտանգավոր և անկառավարելի: Դրանց հնարավոր առճակատումն, իր հերթին, կարող է վերածվել զինված պայքարի ու տահաբեկչության: Գյուլենական շարժման վերաբերյալ բավական կոշտ և բացասական վերաբերմունք են դրսևորում հատկապես վահաբականները: Նույնը կարելի է ասել նաև ադրբեջանական շիա հոգևորականության մասին: Այս առումով Ադրբեջանի ապագան բավական մշուշոտ է:

[5] *Arzu Geybullayeva,* Is Azerbaijan becoming a hub of radical Islam?, http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_110.pdf.
[6] Islamism in Azerbaijan, http://www.euractiv.com/europes-east/islamism-azerbaijan-analysis-512554.

Ադրբեջանի իշխանությունների համար իսլամական գործոնը բավական վտանգավոր է, և նրանք ամեն ինչ անում են երկրում իսլամական ուղղությունների ազդեցությունը նվազեցնելու համար: Չնայած, դրան հակառակ, հասարակական շերտերում կրոնի դերն աստիճանաբար մեծանում է, և դա մեծ հաշվով անկասելի է: Իսկ իշխանությունների գործողությունները տալիս են հակառակ արդյունքը: Այդ շարժումն Ադրբեջանում քաղաքական լուրջ գործոնի վերածվելու հնարավորություն ունի, և դա էլ անհանգստացնում է ալիևյան կլանին: Հավանական է, որ մյուս խորհրդարանական ընտրություններին ընդառաջ արդեն այդ շարժումն ավելի շատ քաղաքական կշիռ ձեռք կբերի, և այդ միտումը հետզհետե կխորանա[7]: Սա կարելի է բացատրել նաև Թուրքիայի ներկայիս իշխանական համակարգի ազդեցությամբ: Գյուլենական շարժման քաղաքական ռազմավարությունն ավելի պարզ է դառնում Գյուլենի 1999թ. հայտարարությունից, որտեղ ներկայացրեց Թուրքիայում իսլամականության իր տեսլականը՝ նշելով, որ շարժման անդամները պետք է աննկատ ներթափանցեն պետական համակարգ, ճյուղավորումներ տան, մինչև որ հասունանա իշխանության լծակները ձեռք բերելու հարմար պահը: Ըստ Գյուլենի՝ վաղաժամ քայլեր անելը կարող է կործանարար լինել այնպես, ինչպես դա եղավ Ալժիրում, Սիրիայում և Եգիպտոսում [6]: Տվյալ պարագայում, Ադրբեջանում ևս գյուլենական շարժումը չի կարող լինել զուտ կրթամշակութային շարժում, այլ ուղղակի քաղաքական օրակարգը կախված է ժամանակի ու ռեսուրսների համատեղումից՝ Ադրբեջանում հասունացնելով դրա բազային հիմքերը:

Պետք է հաշվի առնել Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ա.Փաշազադեի բացասական վերաբերմունքը գյուլենականների նկատմամբ [7], և չի բացառվում, որ վերջին տարիներին ադրբեջանական իշխա-

---

[7] *Səbinə Əliyeva,* Azərbaycanda nurçuların "2015" hədəfi bilindi, www.milliyyet.az/index.php?do=read_news&id=912.

նությունների իրականացրած ձերբակալությունները, ինչպես նաև Բաքվում թուրքական մզկիթների փակումը հրահրված էին հենց նրա կողմից: Այս համատեքստում, չնայած նախկին տարիներին, Ալիևի վարչակազմը կարող է գնալ կտրուկ գործողությունների գյուլենական շարժման ազդցությունը կասցենելու ուղղությամբ, և դրա նախանշաններն առկա են: Մի կողմից՝ Ալիևի վարչակարգը ցանկանում է հաշվեհարդար տեսնել նաև գյուլենականների հետ, սակայն հասկանալով, որ դա ուղղակի կվտանգի Թուրքիայի հետ հարաբերությունները, դեռևս էական գործողություններ չի ձեռնարկում: Մյուս կողմից էլ՝ գյուլենական ուսմունքի ու ազդեցության տարածումը ժամանակի հետ դառնում է ավելի վտանգավոր նույն այդ վարչակարգի համար: Ամերիկյան Ջորջ Մեսոն համալսարանի պրոֆեսոր Պ.Մանդևիլը, օրինակ, նշելով, որ իսլամական ուղղությունները լուրջ վտանգ են ներկայացնում Ադրբեջանում, դրանց շարքին էր դասել նաև գյուլենական ուղղությունը՝ փաստելով, որ ադրբեջանական վերնախավը լրջորեն մտահոգված է դրանից[8]:

Որոշ մասնագետներ, սակայն, նշում են, որ գյուլենական շարժման կրոնական բաղադրիչի տարածման հնարավորությունները սահմանափակ են, և դա պայմանավորված է Ադրբեջանի հասարակության բազմատարրությամբ՝ աշխարհիկ շերտեր, շիականության հետևորդներ, ոչ թյուրքական փոքրամասնություններ և այլն [3]: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ զուտ կրոնական գաղափարախոսության տեսանկյունից շարժումը որոշակիորեն պասիվ է Ադրբեջանում, նշանակում է, որ նրա ռազմավարությունը քաղաքական նպատակների վրա է կառուցված: Դա կարող է լինել քաղաքաբնակների շրջանում նրա կրթական-քարոզչական հաստատությունների միջոցով ինտելեկտուալ սերուցք աճեցնելն ու քաղաքական-պե-

[8] Власти Азербайджана опасаются религиозных течений, http://www.radioazadlyg.org/content/article/2178213.html.

տական համակարգում նրանց ներդրման միջոցով Ադրբեջանի կառավարող էլիտայի վրա լուրջ ազդեցության հասնելը: Մնացյալ դեպքերում, ըստ Ադրբեջանում գյուլենական շարժման գործունեության դիտարկման, անիմաստ ու անպտուղ են դառնում հսկայական ներդրումներն այդ երկրում գյուլենականների կողմից: Ուստի, Ադրբեջանում գյուլենական շարժման օրակարգը, կարելի է ասել, ավելի շատ քաղաքական է, քան կրոնական: Իսկ քաղաքական մակարդակում վերոնշյալ նպատակների իրագործման պարագայում կրոնական օրակարգն ավելի բացահայտ ու անկաշկանդ կարող է ի հայտ գալ:

Աղբյուրներ և գրականություն

1. *Լ.Հովսեփյան,* Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, Դրօշակ, Նոյեմբեր N. 11, 2010:
2. *Ա.Շաքարյան,* Արարատից այն կողմ. ապակողպվորելով Թուրքիան, Եր., 2011:
3. *F.Aliyev,* The Gulen Movement in Azerbaijan, http://www.currenttrends.org/research/detail/the-gulen-movement-in-azerbaijan; *Э.Мамедов,* Азербайджан: оценивая отношение Баку к движению Гюлена, http://russian.eurasianet.org/node/59185.
4. *Birol Topuz,* The Gulen inspired Turkish schools in Baku, Azerbaijan, and mystery of their successes, http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011_proceeding/084_316_ICM2011_PG1182_1191_TURKISH_SCHOOLS.pdf.
5. *А.Юнусов,* Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Баку 2012.
6. *Ա.Փաշայան,* Արդարություն և զարգացում կուսակցության իսլամական հենարանը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=513.
7. *А.Пашаян,* Исламские процессы в Азербайджане, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=1986.

PKK-Ի ԴԵՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Հայկ Գաբրիելյան[*]

Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) դեմ Թուրքիայի մղած պայքարի հետևանքները կարելի է պայմանականորեն արտացոլել չորս ոլորտում՝ ռազմական, տնտեսական, ներքաղաքական-հասարակական և դիվանագիտական-արտաքին քաղաքական: Առաջին երկուսին անդրադարձել ենք նախորդ հոդվածում, այստեղ անդրադառնում ենք *PKK*-ի դեմ Թուրքիայի պայքարի ներքաղաքական-հասարակական և դիվանագիտական-արտաքին քաղաքական կողմերին:

Ներքաղաքական-հասարակական.- *PKK*-ի դեմ պայքարն ուրույն ազդեցություն ունի Թուրքիայի ներքաղաքական գործընթացների և հասարակական կյանքի վրա: Այդ պայքարում կրած ռազմական բազմաթիվ կորուստները հանգեցնում են նրան, որ թուրք մայրերն այլևս չեն ցանկանում իրենց զավակներին ուղարկել բանակ (*PKK*-ի դեմ պատերազմի): Երիտասարդ թուրք զինծառայողն այդ պայքարում մեծ դժվարություններ է կրում քուրդ զինյալի դեմ, որը լեռներում պատերազմելու մի քանի տարվա փորձ ունի: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ երկրի իշխանությունները որոշեցին ստեղծել պայմանագրային զինծառայողների պրոֆեսիոնալ բանակ, որը 24 ժամ շարունակ կհսկի թուրք-իրաքյան և թուրք-սիրիական սահմանները: Պայմանագրային զինծառայողներն ակտիվ գործունեություն են

[*] Թուրքագետ:

ծավալելու քրդաբնակ նահանգներում: Դեռևս 2011թ. մարտին կառավարությունը որոշել էր, որ պրոֆեսիոնալ բանակը պետք է բաղկացած լինի 50.000 պայմանագրային զինծառայողից[1]:

Դժգոհության տեղիք է տալիս նաև այն, որ 2009թ. ապրիլից մեկնարկել է Քրդական համայնքների միության (*KCK*) գործի շրջանակներում ձերբակալությունների ալիքը: Թուրքական կողմը *KCK*-ն համարում է *PKK* քաղաքացիական թևը և տվյալ գործի շրջանակներում արդեն կալանավորել է մոտ 8000 մարդ, որոնցից 36-ը գործող և նախկին քուրդ քաղաքապետներ են: Այդ անձինք մեղադրվում են *PKK* օգտին քարոզչություն իրականացնելու մեջ: Քրդական կողմը *KCK* գործով ձերբակալությունները որակում է որպես «քաղաքական ցեղասպանություն»[2]: Սա բացասաբար է ազդում Թուրքիայի ժողովրդավարական կերպարի ու ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացի վրա: *PKK* խնդիրը լուծելու հարցում լուրջ տարաձայնություններ են առաջանում Թուրքիայի քաղաքական կուսակցությունների միջև: Հիմնական ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական (ԺՀԿ) և Ազգայնական շարժում կուսակցությունները (ԱՇԿ) այդ հարցում շարունակ քննադատում են իշխող Արդարություն ու զարգացում կուսակցությանը (ԱԶԿ): Վերջին շրջանում դրա ամենացայտուն օրինակներից մեկը դարձավ Ուլուդերեի միջադեպը, երբ թուրքական F-16 կործանիչները 2011թ. դեկտեմբերի 28-ին Իրաքի սահմանին ոչնչացրին 34 խաղաղ քուրդ բնակչի՝ նրանց դնելով *PKK* զինյալների տեղ, մինչդեռ զոհվածները խաղաղ բնակիչներ էին և Հյուսիսային Իրաքից մաքսանենգ ճանապարհով Թուրքիա էին ներկրում մազութ և ծխախոտ: ԺՀԿ-ն կատարվածի պատասխանատվությունը դրեց կառավարության վրա՝ վարչապետ Էրդողանին անվանելով «երկրի 34 քաղաքացիների մարդասպան»[3]:

---

[1] TSK'da yeni dönem!, Habertürk, 21.11.2012.

[2] KCK operasyonlarında 8 bin kişi gözaltına alındı, 4 bin kişi tutuklandı, Bilgili Dünya, 06.10.2011.

[3] Uludere katliamı, Radikal, 30.12.2011.

ԱՇԿ-ն, իր հերթին, քննադատում է ԱԶԿ-ին՝ քուրդ առաջնորդ Աբդուլա Օջալանի (իր բնորոշմամբ՝ ահաբեկչի) հետ բանակցելու, ինչպես նաև 2009թ. աշնանը «Քրդական նախաձեռնություններն» առաջ քաշելու համար, որոնցով նախատեսվում էին մի շարք իրավունքներ շնորհել քրդերին: ԱՇԿ նախագահ Դևլեթ Բահչելին «Քրդական նախաձեռնություններն» անվանել է «Թուրքիան մասնատելու պլան»[4]: Նա Թուրքիայի պատմության մեջ «ամենամեծ խայտառակություն» է որակել *PKK*-ի հետ ԱԶԿ մերձեցման փորձերը՝ հիշատակելով Օսլոյում *PKK* ու *MIT* հինգ հանդիպումները[5]: 2012թ. աշնանը Թուրքիայում խաղաղության գործընթացի մեկնարկից հետո Բահչելին անխնա քննադատում է Էրդողանին. «ԱԶԿ-ն գրեթե գրկախառնության մեջ է ահաբեկչական *PKK*-ի հետ», «Էրդողանի կուսակցության վախճանը մոտ է», «Էրդողանը *PKK*-ի հետ ծուղակ է պատրաստում Թուրքիայի ժողովրդի ու բանակի համար», «Վարչապետն առևտրի մեջ է մտել երեխաներին սպանած հանցագործների հետ», «Էրդողանն ու Օջալանը սիամական երկվորյակներ են»: Բահչելին Էրդողանին է հղում իրեն (և ոչ միայն) հուզող գլխավոր հարցը. «Ինչի՞ դիմաց է *PKK*-ն վայր դնելու զենքը»: Հարկ է նշել, որ Բահչելին երկար ժամանակ Էրդողանին սուր քննադատելու առիթներ չէր ունեցել՝ ի տարբերություն ԺՀԿ-ի (Ուլուդերե, Սիրիա): Պատճառն այն էր, որ շատերի կարծիքով՝ վերջին շրջանում Էրդողանի կուսակցությունը դարձել է ամենաազգայնականը Թուրքիայում:

PKK-ի դեմ պայքարին առնչվող հարցերում տարաձայնություններ կան նաև ԱԶԿ ներսում: Օրինակ, 2012թ. հունիսի 15-ին Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արընչը հայտարարեց, որ Աբդուլա Օջալանին կարող է տնային կալանք տրվել, եթե *PKK*-ն վայր դնի զենքը: Սակայն Էրդողանը հակադարձեց նրան՝ հայտարարելով, որ Բյուլենթ Արընչի որոշումը դատական որոշում չէ, և նա լիազորված չէ

[4] *Erhan Başyurt,* Kürt açılımı ve MHP, Bugün, 04.08.2009.

[5] Bahçeli MİT-PKK görüşmesine için sert konuştu, Haber7, 18.09.2011.

այդպիսի հայտարարություն անելու[6]: ԱԶԿ ներսում տարաձայնություններ ծագեցին նաև Ուլուդերեի միջադեպի վերաբերյալ: Թուրքիայի տվյալ ժամանակվա ներքին գործերի նախարար Իդրիս Նաիմ Շահինն այդ միջադեպի զոհերին անվանեց «*PKK* դերակատարներ»: Սակայն դրան հակադարձեց ԱԶԿ փոխնախագահ Հուսեին Չելիքը՝ ընդգծելով, որ եթե այդ մարդիկ իրենց ամենօրյա հացը վաստակել են մաքսանենգությամբ, ապա դա ամենևին էլ չի նշանակում, թե նրանք *PKK* դերակատարներ են[7]:

2012թ. նոյեմբերի վերջին Էրդողանի կառավարությունը խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց ԽԺԿ 10 պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու օրինագիծը. բանն այն է, որ 2012թ. օգոստոսին նրանք Հաքքարի նահանգի Շեմդինլի շրջանում գրկախառնվել և ջերմ զրույց էին ունեցել *PKK* զինյալների հետ: ԽԺԿ-ն, իր հերթին, Էրդողանից պահանջեց նախ պատասխան տալ Ուլուդերեի միջադեպի համար[8]: Աբդուլլա Օջալանին ազատ արձակելու կամ նրա բանտային պայմանների մեղմացման համար Թուրքիայում բազմիցս կազմակերպվում են քրդերի զանգվածային բողոքի ակցիաներ, որոնց ընթացքում բախումներ են լինում թուրքական անվտանգության ուժերի հետ: 2012թ. սեպտեմբերի 12-ին Օջալանի բանտային պայմանների մեղմացման և քրդերին մի շարք իրավունքներ շնորհելու պահանջով Թուրքիայի 58 բանտերում 690 բանտարկյալ զանգվածային հացադուլ հայտարարեց, որը տևեց 68 օր: Չնայած դրան՝ Էրդողանը, հացադուլը որակեց «շոու»՝ ընդգծելով, որ հացադուլավորներին ղեկավարում են «մահվան վաճառականները» (*PKK* առաջնորդները), որոնք մի կողմից ոչխարի քաբաբ են ուտում, իսկ մյուս կողմից էլ բանտում գտնվողներին ասում են՝ «Հացադուլ արեք ու մեռեք»[9]:

[6] AKP'de yeni çatlak mı?, Vatan, 17.06.2012.
[7] Çelik'ten Bakan Şahin'e Uludere tepkisi, Sabah, 24.05.2012.
[8] BDP'li 10 vekilin dokunulmazlık fezlekesi Meclis'te, Dünya, 27.11.2012.
[9] Erdoğan: Açlık grevi yok, şov yapıyorlar!, Vatan, 31.10.2012.

2011թ. փետրվարին Թուրքիայի խորհրդարանում ԱԶԿ ու ԽԺԿ պատգամավորների միջև ծեծկռտուք տեղի ունեցավ, ինչի պատճառն այն էր, որ ԽԺԿ ներկայացուցիչը, խոսելով Օջալանի մասին, օգտագործել էր «պարոն Օջալան» արտահայտությունը, ինչը դուր չէր եկել ԱԶԿ ներկայացուցիչներին: Վերջիններս քուրդ պատգամավորներին զգուշացրել են «պարոն» բառը չօգտագործել մի մարդու պարագայում, որը Թուրքիայում «դարձել» է 40.000 մարդու մահվան պատճառ, ինչից հետո էլ բռնկվել էր ծեծկռտուքը[10]: Էրդողանն, իր հերթին, տեղի հեռուստաալիքներին կոչ է արել չցուցադրել *PKK*-ի դեմ պայքարում զոհված զինծառայողների հուղարկավորությունը, քանի որ, նրա կարծիքով՝ դա *PKK* օգտին ակամա քարոզչության ձև է: 2012թ. մայիսի վերջերին Ստամբուլի 9-րդ դատարանի որոշմամբ՝ 1 ամսով փակվեց քրդական *Demokratik Vatan* («Ժողովրդավարական հայրենիք») շաբաթաթերթը, որը մեղադրվել էր *PKK* օգտին քարոզչության մեջ[11]:

Այսպիսով, «*PKK* անդամ հանդիսանալու» կամ «*PKK* օգտին քարոզչություն կատարելու» մեղադրանքով (պատրվակով) Թուրքիայում ձերբակալվել ու կալանավորվել են հազարավոր անձինք (մեծ մասամբ քրդեր), այդ թվում՝ լրագրողներ և պատգամավորներ, փակվել են թերթեր: Այս ամենը խիստ բացասաբար է անդրադառնում Թուրքիայի ժողովրդավարական կերպարի վրա և վնասում է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացին: Մեջբերման արժանի է 2011թ. սեպտեմբերի 11-ին ընդառաջ 66 երկրում (որոնց բաժին է ընկնում աշխարհի բնակչության 70%-ը) ահաբեկիչների թվաքանակի շուրջ ամերիկյան *Associated Press (AP)* գործակալության անցկացրած հետազոտությունը՝ կապված սեպտեմբերի 11-ի ահաբեկչության 10-րդ տարելիցի հետ: Հետազոտությունը ցույց էր տվել, որ վերջին 10 տարում դատապարտած ահաբեկիչների թվով Թուրքիան աշխարհի բացարձակ առաջատարն է: 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությանը հա-

[10] 'Sayın Öcalan' kavgası, Hürriyet, 11.02.2011.

[11] Demokratik Vatan gazetesine kapatma cezası, Radikal, 22.05.2012.

ջորդած 10 տարվա ընթացքում աշխարհում որպես ահաբեկիչ դատապարտվել է 35.117 մարդ, որի 1/3-ը (12.897 մարդ) բաժին է ընկել Թուրքիային: *AP*-ն ընդգծել էր, որ Թուրքիայում որպես ահաբեկիչ դատապարտված անձանց հարցում կարծիքները կիսվում են. մի մասը նրանց (քրդերին) դիտարկում է որպես ահաբեկիչներ, մի մասն էլ՝ ազատության համար պայքարի մարտիկներ[12]:

Դիվանագիտական-արտաքին քաղաքական.– Թուրքիան *PKK* պատճառով բախվում է բազմաթիվ երկրների հետ՝ նրանց մեղադրելով *PKK*-ին ուղղակի և անուղղակի աջակցություն ցուցաբերելու մեջ: Սա, մասնավորապես, վերաբերում է հարևան երկրներին, որոնք, թուրքական կողմի պնդմամբ, *PKK* խաղաքարտի գործադրմամբ իրեն դժվարին վիճակի մեջ են դնում:

2012թ. սեպտեմբերի վերջին Էրդողանը հայտարարեց, որ Գերմանիայի տարածքում գտնվում է *PKK* 13.000 զինյալ. «*PKK*-ի դեմ քաղաքական և ռազմական պայքարում Գերմանիան Եվրոպայի ամենակարևոր երկիրն է, քանի որ Եվրոպայում *PKK*-ին ամենամեծ աջակցությունն է ցուցաբերում: Այստեղ քուրդ գործարարները միլիոնավոր եվրոներ են նվիրաբերում կամ ստիպված են տալ *PKK*-ին: Վերջին տարիներին *PKK*-ն եվրոպական մի շարք երկրներում զգալիորեն ակտիվացրել է իր շահերի լոբբինգը: Եվրոպական երկրներում հավաքված գումարը (ըստ ՆԱՏՕ տնտեսական հանձնաժողովի զեկույցի՝ տարեկան ավելի քան 200 մլն եվրո) ոչ պետական ճանապարհով՝ միջնորդների միջոցով, ուղարկվում է Ղանդիլ: Ընդհանուր առմամբ՝ *PKK*-ն ֆինանսավորվում է եվրոպական 14 երկրից՝ Գերմանիա, Հունաստան, Ռումինիա, Նիդերլանդներ, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Շվեյցարիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Իսպանիա, Իռլանդիա»[13]:

[12] "Teröristlerin' üçte biri Türkiye'de", CNN Türk, 05.09.2011.

[13] *Uğur Ergan,* 13 bin PKK'lı Almanya'da, Hürriyet, 29.09.2012.

2012թ. նոյեմբերի 23-ին Իդրիս Նաիմ Շահինը հարևան երկրներին մեղադրեց *PKK*-ին աջակցելու մեջ. «Մենք տեղյակ ենք, որ Շեմդինլիում և Յուքսեքովայում գրանցված բախումների ժամանակ վիրավորված *PKK*-ականները բուժվում են Իրանի հիվանդանոցներում, իսկ Աղրըում (Արարատ) վիրավորված զինյալները՝ Հայաստանում: Իր ժողովրդին զուլումի ենթարկող Սիրիան թշնամական դիրքորոշում է որդեգրել Թուրքիայի նկատմամբ և աջակցում է *PKK*-ին՝ նրան տալով գործելու հնարավորություն: Ինչպես հայտնի է, Իրաքի հյուսիսը վերածվել է ահաբեկչական կազմակերպության լոգիստիկ և կրթական կենտրոնի»[14]:

2012թ. սեպտեմբերի սկզբներին թուրքական հատուկ ծառայությունների անցկացրած հետաքննությունը պարզեց, որ Բինգյոլում թուրք 8 իրավապահների և 10 զինծառայողների վերացման գործողության ժամանակ *PKK* զինյալներն օգտվել են իսրայելական *Tadiran Telecom* ընկերության արտադրության գերժամանակակից լրտեսական սարքավորումից, ինչը հնարավորություն է տվել գաղտնալսել թուրք ուժայինների խոսակցությունները, իմանալ նրանց պլանների մասին և դարանակալել նրանց[15]: 2012թ. հունիսի 30-ին ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (ՀԿԹՀ) նախագահ Դերվիշ Էրօղլուն, մեկնաբանելով հուլիսի 1-ից վեց ամսով Կիպրոսի կողմից ԵՄ նախագահության ստանձնումը, հայտարարեց, թե (Հարավային) Կիպրոսում «գտնվում» է *PKK* 3000 զինյալ, որոնց ռազմական կրթությունն իրականացնում է Իսրայելը: Էրօղլուի խոսքով՝ ցայժմ Կիպրոսում Իսրայելի կողմից «ռազմական կրթություն է ստացել» 15.000 քուրդ զինյալ, որոնք Կիպրոսից տեղափոխվել են Հյուսիսային Իրաք[16]:

---

[14] PKK'ya yardım eden ülkeleri tek tek açıkladı, Sabah, 23.11.2012.

[15] İsrail'den PKK'ya 'anlık' istihbarat, Yeni Şafak, 20.09.2012.

[16] "Güney Kıbrıs'ta 3 bin PKK'lı var!", Ahaber, 30.06.2012.

2012թ. նոյեմբերի 28-ին Հունաստանի ՊՆ-ին կից՝ պաշտոնական կառույց Աթենքի ռազմական թանգարանում տեղի ունեցավ *PKK* առաջնորդներից մեկի՝ Մուրադ Քարայըլանի «Մի պատերազմի անատոմիա» գրքի շնորհանդեսը, որից անմիջապես հետո Ահմեդ Դավութօղլուն հեռախոսազրույց ունեցավ իր հույն գործընկեր Դիմիտրիս Ավրամոպուլոսի հետ՝ հայտնելով իր դժգոհությունը[17]: *PKK* պատճառով Թուրքիան խնդիրներ է ունեցել նաև Դանիայի հետ՝ այդ երկրի իշխանություններից պահանջելով դադարեցնել աշխարհի 68 երկրում քրդական *Roj TV* հեռուստաալիքի գործունեությունը, որը, թուրքական կողմի պնդմամբ, զբաղված է *PKK* օգտին քարոզչությամբ[18]:

Ահմեդ Դավութօղլուի խոսքով՝ *PKK*-ի դեմ պայքարն իր բացասական կնիքն է թողել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացի վրա: 2012թ. նոյեմբերի 8-ին Դավութօղլուն Բրյուսելում հայտարարեց. «1990-ականներին Թուրքիան բաց թողեց ԵՄ գնացքը, իսկ այսօր ԵՄ-ն է բաց թողնում Թուրքիայի գնացքը: 1990-ականներին Բալկանները փոփոխություններ էին վերապրում, մինչդեռ Թուրքիան ահաբեկչական վտանգի (*PKK*) պատճառով առաջնահերթությունը տվել էր իր անվտանգության ապահովմանը: Դրա հետևանքով Թուրքիայում հետաձգվեցին բարեփոխումները, և Թուրքիան բաց թողեց ԵՄ գնացքը»[19]:

Այսպիսով, *PKK* պատճառով Թուրքիան ստիպված է լինում բախվել բազմաթիվ երկրների հետ՝ տարբեր մակարդակներով մեղադրանքներ ներկայացնելով նրանց: *PKK*-ն լրջորեն սասանում է ներկայում տարածաշրջանային առաջնորդի դերին հավակնող Թուրքիայի հեղինակությունը, որը շարունակ միջամտում է հարևան երկրների ներքին գործերին, իսկ վերջիններս անմիջապես մատնացույց են անում Թուրքիայի ներքին խնդիրները՝ ընդգծելով, որ Թուրքիան ի վիճակի չէ լուծել անգամ *PKK* խնդիրը:

[17] Türkiye'den Yunanistan'a PKK uyarısı, Dünya Bülteni, 30.11.2012.
[18] Roj TV kapandı, Haber Türk, 27.09.2012.
[19] Davutoğlu: 'AB, Türkiye trenini kaçırmasın', EurActiv, 08.11.2012.

Հետևություններ.– 2013թ. մարտի 21-ին (Նովրուզ) Աբդուլա Օջալանը բանտից պատմական կոչ հղեց *PKK* զինյալներին՝ հանուն նոր Թուրքիայի վերջ դնել պայքարի ռազմական ձևերին և անցում կատարել ժողովրդավարական, քաղաքական պայքարին, վայր դնել զենքն ու քաշվել Հյուսիսային Իրաք[20]: Պետք է նշել, որ խաղաղության այդ գործընթացը հաջողությամբ ավարտելուն խոչընդոտում է կողմերի միջև առկա անվստահությունը: Օջալանի կոչից հետո կողմերն աչքի ընկան մի շարք իրարամերժ հայտարարություններով: Թուրքական կողմը նշում է, որ քուրդ զինյալները երկրի տարածքը փուլերով լքելու են մինչև նոյեմբեր (նշվում է, որ այդ գործընթացը վերահսկելու է Ազգային հետախուզական կազմակերպությունը (*MIT*): Սակայն ԽԺԿ-ն հայտարարել է, որ կոնկրետ ժամկետներ չեն սահմանվել: Բացի այդ, Էրդողանը դեմ է *PKK*-ականների կողմից Թուրքիայի տարածքն անվտանգ լքելու վերաբերյալ խորհրդարանում օրինագիծ ընդունելուն՝ ընդգծելով, որ դա կհակասի սահմանադրությանը, իսկ *PKK*-ականների համար անվտանգ ելքն ապահոված կլինի զենքը հանձնելուց հետո: *PKK*-ն, իր հերթին, հրաժարվում է լքել երկրի տարածքը, քանի դեռ խորհրդարանի կողմից չեն ընդունվել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ:

Միևնույն ժամանակ, Էրդողանը կտրականապես հերքում է Օջալանին տնային կալանք տալը. նա նշում է, որ նրա բանտային պայմանները բարելավվել են, անգամ բանտախցում տեղադրել են հեռուստացույց՝ Թուրքիայում տեղի ունեցող և քուրդ ժողովրդին առնչվող իրադարձություններին հետևելու համար[21]: Արդարադատության նախարար Սադուլա Էրգինը նույնպես հավաստիացրել է, որ իրենք չեն վերանայելու Օջալանի գործը: Իսկ նախագահ Աբդուլա Գյուլը կարևորել է *PKK*-ականների կողմից զենքի հանձնումը. «Կար-

[20] Öcalan: Silahlar sussun, sınırdışına çıkın, Dünya Bülteni, 21.03.2013.

[21] Erdoğan: Öcalan'a ev hapsi gündemimizde yok, Zaman, 29.03.2013.

զավորման գործընթացում պետք է ձգտել հասնել խնդրին բացարձակապես վերջակետ դնելուն: Եթե այդ մարդիկ վայր չդնեն զենքը և չսկսեն նորմալ կյանք վարել, ապա խնդիրը կարող է վերսկսվել 3-5 տարի անց: Այդ դեպքում արդյունքը կլինի էլ ավելի վատ»[22]:

Հարկ է նշել, որ ներկայիս գործընթացը հաջող ավարտելու դեպքում Էրդողանը հազիվ թե խնդիրներ ունենա հաջորդ տարվա օգոստոսին կայանալիք նախագահական ընտրություններում, մինչդեռ Թուրքիայում անցկացված վերջին հարցախույզները վկայում են, որ նա զիջում է Գյուլին: Հաշտեցումը կարող է դրական ազդեցություն ունենալ նաև 2014թ. մարտին Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վրա, որոնց մեծ կարևորություն է տալիս Էրդողանը՝ ԱԶԿ-ի առջև խնդիր դնելով քրդաբնակ նահանգներում անպայմանորեն հաղթել ԽԺԿ-ին: Միևնույն ժամանակ, հնարավոր է, որ խաղաղության գործընթացի հաջող ավարտից հետո Էրդողանը հայտնվի էյֆորիայի մեջ և ավելի խիստ դիրքորոշում որդեգրի քրդերի հանդեպ, ինչն էլ կարող է հանգեցնել Գյուլի հիշատակած սցենարին:

Այսպիսով, չպետք է բացառել, որ այս բարդ գործընթացը կարող է տապալվել, եթե կողմերից մեկը խախտի պայմանավորվածությունը: Չպետք է մոռանալ նաև դրանում արտաքին ուժերի (առաջին հերթին՝ Իրանի) շահագրգռվածության մասին: Բանն այն է, որ, ինչպես այս տարվա փետրվարի կեսին դիպուկ նկատել է *MIT* նախկին ղեկավարի տեղակալ Ջևաթ Օնեշը, Թուրքիան «Քրդական հարցի» լուծման դեպքում խոշոր ոստյուն կկատարի տարածաշրջանում: Դա կարող է ազդել նաև սիրիական ճգնաժամի կարգավորման վրա:

Ինչ վերաբերում է քրդական կողմին, ապա *PKK*-ում ոչ բոլորն են ողջունում զինաթափման մասին Օջալանի կոչը: Կարելի է կարծել, թե *PKK*-ն մեծ ռիսկի չի դիմում՝ համաձայնելով Թուրքիայի տա-

[22] Gül: PKK silah bırakmazsa bu iş yeniden başlar, Radikal, 03.04.2013.

ռածքը լքելուն, քանի որ նրա համար հետագայում հազիվ թե դժվարություն ներկայացնի Հյուսիսային Իրաքից (ինչպես նաև Իրանից ու Սիրիայից) Թուրքիա ներթափանցելը: Զենքը հանձնելու հետ կապված՝ անհրաժեշտության դեպքում քրդական կողմը կարող է զենք հայթայթել՝ հաշվի առնելով արտաքին ուժերի՝ Թուրքիային զսպելու և Թուրքիայում ապակայունություն առաջացնելու ձգտումները: Թուրքական իշխանությունները պետք է լուծեն նաև *PKK*-ի դեմ պայքարի շրջանակներում ստեղծված «գյուղական պահապանների» (քուրդ վարձկաններ) համակարգի հարցը: Գյուղական պահապանները գտնում են, որ իրենք գտնվում են *PKK*-ականների թիրախում, և որ պետությունը պետք է, *PKK*-ի հետ հաշտվելուց բացի, իրենց նույնպես հաշտեցնի *PKK*-ի հետ, քանի որ, հակառակ դեպքում, Թուրքիայում կարող է սկսվել արյունոտ վրեժխնդրության ժամանակաշրջան:

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՂՐՂԶՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ (ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Սերգեյ Սարգսյան[*]

Հետխորհրդային տարածքում նոր ինտեգրացիոն նախագիծը՝ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), առաջ է բերել բազմակողմներ, բանավեճեր և բուռն քննարկումներ ինչպես բուն նախագծի կենսունակության հարցի, այնպես էլ դրան միանալու հնարավոր «պլյուսների» և «մինուսների» շուրջ:

Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի այլընտրանքային առաջարկությունն ակտիվացրել է նաև «Արևելյան գործընկերություն» ծրագրի բոլոր մասնակից պետությունների բանակցային գործունեությունը եվրոպական ուղղությամբ: Դա հատկապես նկատելի է Ուկրաինայի օրինակով, որի հետ Եվրոպական միությունն արդեն 2013թ. նոյեմբերին, «Արևելյան գործընկերության»՝ Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովում կարող է ստորագրել «Համաձայնագիր ասոցիացված գործընկերության մասին»:

Կենտրոնական Ասիայի պետություններում, որոնք աշխարհագրական և քաղաքական առումներով գտնվում են ուժի երկու աշխարհաքաղաքական կենտրոնների՝ Ռուսաստանի և Չինաստանի միջև, Մաքսային միությանը միանալու հեռանկարները նույնպես պակաս լարվածությամբ չեն քննարկվում:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

Չնայած 2014թ. մայիսի 1-ին Եվրասիական տնտեսական միության պայմանագիրն արդեն պետք է պատրաստ լինի, իսկ 2015թ. հունվարի 1-ից միությունը պետք է գործի որպես նոր միջազգային կազմակերպություն, մի շարք փորձագետներ, քաղաքական գործիչներ և մշակութաբաններ բավական հիմնավոր կերպով թերահավատորեն են վերաբերվում երեք պետությունների վերպետական կառույցի ստեղծման հնարավորությանը: Միևնույն ժամանակ, նրա տնտեսական բազան՝ Մաքսային միության տեսքով, արդեն գործում է, և դա թույլ է տալիս բավական ճիշտ հաշվարկել նախագծին այս կամ այն պետության հնարավոր միացման տնտեսական հեռանկարները, պարզել նրա ուժեղ և թույլ կողմերն այդ պետությունների տնտեսությունների յուրաքանչյուր առանձին ճյուղի համար:

Արդեն բավական մեծ թվով գիտակիրառական հետազոտություններ են անցկացվել, որոնք շահագրգիռ պետությունների իշխանական վերնախավերին թույլ են տալիս կողմնորոշվել, թե ինչ քաղաքականություն մշակեն Եվրոպական և Եվրասիական միությունների հանդեպ: Հայաստանի համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն, թե հատկապես ինչ սպասելիքներ ունեն վերջիններն այս կամ այն ինտեգրացիոն նախագծին իր միանալուց, ինչ խնդիրներ կարող են կանգնել նրանց առջև և ինչն ավելի շատ կմտահոգի նրանց:

Մի շարք տնտեսագետներ Մաքսային միությանը Ղրղզստանի միանալու դրական կողմերի մեջ նշում են չինական ներկրվող ապրանքների համեմատ ղրղզական ապրանքների մրցունակության բարձրացումը՝ ի հետևանք արգելափակիչ մաքսատուրքերի: Դրա հետ մեկտեղ, ՄՄ-ում ներքին մաքսատուրքերի բացակայությունը և Ռուսաստանի, Ղազախստանի ու Բելառուսի շուկաների հասանելիությունը շահութաբեր են դարձնում արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտների տեղակայումը Ղրղզստանի տարածքում:

Սա հատկապես վերաբերում է Ղրղզստանի ագրոարդյունաբերական համալիրի արտադրանքին, որն իր նշանակությամբ և հեռանկարներով գնահատվում է որպես Ղրղզստանից ՄՄ շուկաներ արտահանման թիվ 2 հոդված[1]:

Ուղղակի դրական, և որ գլխավորն է՝ անհապաղ արդյունք սպասվում է թեթև արդյունաբերությունում, որի արտահանական հնարավորություններն այժմ էլ որոշ աճ են գրանցում:

Ինչ վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը, ապա առկա ներդրումային հոսքերի (մասնավորապես՝ Չինաստանից և Կանադայից) պարագայում, Մաքսային միությունում ընդգրկված երկրների ընկերությունների ներգրավումը (ՄՄ առաջարկելիք շահավետ պայմաններով) կհանգեցնի ճյուղի օբյեկտների մրցակցային գրավչության բարձրացմանը, ինչը նույնպես դրականորեն կանդրադառնա ճյուղի զարգացման տեմպերի վրա: Կանխատեսվում է հասնել ընդունելի հավասարակշռության «հին» և «նոր» ներդրողների միջև: Լեռնային մետալուրգիայի որոշ կլաստերների գծով Ղրղզստանի մասնագիտացումը, ՄՄ պետությունների պրոֆիլային օբյեկտների հետ ճյուղային կոոպերացիայի համատեքստում, միջնաժամկետ հեռանկարում կհանգեցնի տեղական արտադրության շահութաբերության էլ ավելի մեծ աճի:

Իսկ հետագայում Միասնական տնտեսական տարածքում (ՄՏՏ) երկրի ընդգրկվելու հեռանկարը կապահովի կապիտալների, ներդրումների և աշխատուժի ազատ տեղաշարժը: Առաջին փուլում աշխատանքային միգրացիան (որոշ հաշվարկներով՝ Ղրղզստանի մոտ 2 մլն քաղաքացի[2]), առաջին հերթին, Ռուսաստան և Ղազախստան, պետք է կայունացնի գործազրկության մակարդակը հանրապետությունում, բարձրացնի կենսամակարդակը և որոշակիորեն նվա-

[1] Ղրղզստանի եկամուտների թիվ 1 հոդվածը աշխատանքի արտահանումն է:

[2] «Новая шоковая терапия» - вступление Киргизии в ТС: закрытый ситуационный анализ. REGNUM լրատվական գործակալություն, 26.03.2013. www.regnum.ru/news/1640314.html

զեցնի սոցիալական լարվածությունը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հարցումների արդյունքները, հարցման ենթարկված աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը հաստատ մտադիր է առաջին իսկ հնարավորության դեպքում, աշխատատեղերի ստեղծման պարագայում, վերադառնալ հայրենիք[3]:

Միասնական տնտեսական տարածքը, ինչպես սպասվում է, նախաձեռնում է նաև տուրիզմի զարգացում և դրանում հավելյալ խոշոր ներդրումների ներգրավման հնարավորության մեծացում:

Դրա հետ մեկտեղ, Մաքսային միություն մտնելը, մաքսատուրքերի միջին տոկոսադրույքի մինչև 10% աճը առնվազն կարճաժամկետ հեռանկարում կհանգեցնեն գրեթե մեկ երրորդով մաքսային գանձումների կրճատմանը և խիստ բացասաբար կանդրադառնան դրրըզ գործարարների բավական մեծ այն հատվածի վրա, որը զբաղվում է չինական ապրանքների վերարտահանմամբ (իսկ դա ՉԺՀ-ից ներկրվող ապրանքների մոտ 70%-ն է): Սոցիալական առումով դա նշանակում է ամենօրյա պահանջարկ ունեցող չինական արտադրանքի գների և մանրածախ գների ընդհանուր աճ[4]:

Չինական ապրանքների առջև դրրզական շուկան բացելը, ինչը ժամանակին Պեկինի կողմից լոբբիի ենթարկվեց պետական մակարդակով, հանգեցրեց այն բանին, որ տեղական ապրանքները փոխարինվեցին չինականով, և հիմա հայրենական արտադրողի վերականգնումն ու աջակցությունը բավական բարդ խնդիր կլինի երկրի ղեկավարության համար:

---

[3] Ռուսաստանում մշտական բնակություն հաստատել ցանկանում է «Մաքսային միությանը և ՄՏՏ-ին Ղրղզստանի միանալու հետևանքները երկրի աշխատանքային շուկայի և մարդկային կապիտալի համար» հետազոտական նախագծի շրջանակներում հարցվածների միայն 6%-ը, Ղազախստանում՝ 9%-ը: Ինտեգրացիոն հետազոտությունների կենտրոն, Սանկտ Պետերբուրգ, 2013:

[4] «Новая шоковая терапия» - вступление Киргизии в ТС: закрытый ситуационный анализ. REGNUM լրատվական գործակալություն, www.regnum.ru/news/1640314.html

Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա Մաքսային միությունում նրա ընդգրկվելու բոլոր «պլյուսներն» ու «մինուսներն» ընդգծվում են Ուկրաինայի և ԵՄ-ի միջև ասոցիացիայի համաձայնագրի իրականացման այլընտրանքային հեռանկարների ֆոնին:

ՄՏՏ-ին Ուկրաինայի ինտեգրման կողմնակիցների կարծիքով, որոնք հենվում են մի շարք հետազոտությունների տվյալների վրա, որ անցկացրել է, մասնավորապես, աշխատանքային խումբը, որը 2010-11թթ. աշխատել է Ուկրաինայի էկոնոմիկայի փոխնախարար, պրոֆեսոր Վ.Մունտիյանի ղեկավարությամբ, Մաքսային միությանը միանալու դեպքում Ուկրաինան կունենա արտադրության աճ 3-3,5%-ով, ՀՆԱ աճ 2,5%-ի մակարդակով, իսկ պետբյուջեի եկամուտների հավելյալ աճը կանխատեսվում է տարեկան մոտ 9,4 մլրդ գրիվնայի (մոտ $1,2 մլրդ) մակարդակով: Ընդ որում՝ չհաշված սակագնային, էներգետիկ և այլ փոխհատուցումները[5]:

Ինչպես կարծում է «Ֆոլիո» հրատարակչության (Խարկով) գլխավոր խմբագիր Ա.Կրասովիցկին, ՄՄ-ին ինտեգրմամբ շահագրգռված են Ուկրաինայի միջին և մանր բիզնեսը (որը կկարողանա էապես ընդլայնել իր ներկայությունը ՄՄ լայն շուկայում) և երկրի հասարակ բնակչությունը: Իսկ ահա քաղաքական վերնախավը և խոշոր բիզնեսը շահագրգռված չեն ՄՄ մտնելով[6], թեև դրանց ներկայացուցիչները մետալուրգիական, քիմիական, նավթային արդյունաբերությունում և էլեկտրաէներգիայի արտադրությունում «ԵՄ-ի հետ ասոցիացիայի համաձայնագրի» ուժի մեջ մտնելուց հետո կարող են բախվել շատ մեծ խնդիրների: Մասնավորապես, Համաձայնագրի հավելվածում խոսվում է «գոյություն ունեցող գործարանների համար արտանետումների սահմանային մեծությունների» մասին: Այսինքն՝ Ուկրաինան ստիպված կլինի շտապ կարգով զտիչ համակարգեր տե-

[5] «Украина и Таможенный союз: время дискуссий заканчивается», http://rusedin.ru/2013/02/20/ukraina-i-tamozhennyj-soyuz-vremya-diskussij-zakanchivaetsya/
[6] Նույն տեղում:

դակայելու միջոցներ ընդունել: Հաշվի առնելով արդյունաբերական օբյեկտների տարիքը՝ չի բացառվում, որ օրակարգային կլինի դրանցից առնվազն մի քանիսի փակման հարցը:

Ի դեպ, Համակարգային վերլուծության և կանխատեսման կենտրոնի նախագահ Ռ.Իշչենկոյի տվյալներով՝ անկախության քսան տարիների ընթացքում Ուկրաինան առանց այդ էլ պահպանել է 1991թ. արդյունաբերական պոտենցիալի ընդամենը 30%-ը: Միայն 2012թ. փակվել է մետալուրգիական հզորությունների 40%-ը, իսկ 2013-ին նախատեսվում է փակելածխարդյունահանող ձեռնարկությունների և հանքերի 30%-ը[7]:

Բացի այդ, Ուկրաինան էլ ավելի է կորցնում ներդրումային գրավչությունը Ռուսաստանի համար, արդյունքում՝ ուկրաինացի գործարարներն իրենք են իրենց արտադրությունները տեղափոխում ՌԴ: «Շոկոլադի արքա» Պյոտր Պորոշենկոն, օրինակ, Ռուսաստան է տեղափոխել և՛ իր շոկոլադի բիզնեսը, և՛ «Բոգդան» ավտոբուսներ արտադրող գործարանը:

Եվրոպական միությանն Ուկրաինայի ինտեգրման կողմնակիցներն իրենց փաստարկներն ունեն: Ըստ պաշտոնական տվյալների՝ երկրի դիրքերն, օրինակ, ԵՄ ագրոարդյունաբերական արտադրանքի շուկայում ավելի են ամրապնդվում. ընթացիկ տարվա առաջին եռամսյակում Ուկրաինայի և Եվրամիության երկրների միջև ապրանքաշրջանառությունն ավելացել է 46%-ով և հասել $2,5 մլրդ-ի: Ագրարային քաղաքականության և պարենի նախարար Նիկոլայ Պրիսյաժնյուկի խոսքով՝ հեռանկարային է նաև Ուկրաինայի միանալը գյուղատնտեսության գծով եվրոպական հարևանության և գյուղական տարածքների զարգացման *ENPARD* ծրագրին. «Եվրոպայում այդ ծրագիրն արդեն արդյունքներ է տվել: Եվրոպան արդեն մշակել է մի ծրագիր, որը նախատեսում է տեխնիկական, ֆինանսական օգնու-

[7] Նույն տեղում:

թյուն կոոպերատիվների ստեղծման համար: Իսկ մենք, այն բանից հետո, ինչ վերացրինք կոլտնտեսությունները, պետք է գյուղում տնտեսվարելու արդյունավետ ձև առաջարկենք»[8]:

Միևնույն ժամանակ, ըստ Համաձայնագրի՝ Ուկրաինայի արտահանվող գյուղարտադրանքի բոլոր տեսակները խստորեն կանոնակարգվելու են: Օրինակ, 3 մլն տ հացահատիկի փոխարեն, որը երկիրը վերջին մի քանի տարիներին արտահանում էր Եվրոպա, քվոտան իջեցվելու է մինչև 1 մլն տոննայի, շաքարի արտահանման տասնակի կրճատում է նախատեսվում՝ 300 հազարից մինչև 30 հազար տոննա:

Առևտրի համաշխարհային կազմակերպությանն Ուկրաինայի միանալու պայմանագրով դեռ 2010 թվականից երկիրը պարտավոր էր արգելք մտցնել տնային տնտեսություններում արտադրված մսի, ճարպի, կարագի և կաթի վաճառքի վրա: Իսկ հիմա արգելքը տարածվում է թթու կաղամբի, աղը դրած մթերքի, բռնվածքի խնձորների (*моченые яблоки*), բնական յուղի, հորթի սուկիի, մեղրի և այլնի վրա. «Գյուղատնտեսական բուսատեսակների ընդհանուր տեսականու վերաբերյալ դիրեկտիվը» հստակ նշում է, թե Ուկրաինայի տարածքում աճեցված ինչն է կարելի, որ հայտնվի շուկայում:

Բացի այդ, Համաձայնագրի ստորագրումից հետո առաջին տարիներին Ուկրաինան ստիպված կլինի լիովին փոխարինել իր չափորոշիչների (իսկ դրանք ավելի քան 20 հազար են) համակարգը եվրոպականով: Ուկրաինայի գործատուների ֆեդերացիայի փորձագետների հաշվարկներով՝ ԵՄ անդամ պետությունների չափորոշիչների համակարգերի հետ ունեցած տարբերությունների պատճառով երկիրը կկորցնի տարեկան ոչ պակաս, քան $15 մլրդ[9]: Եվ հազիվ թե հաջողվի այդ շուկան «ծածկել» Եվրամիության շուկայով:

---

[8] «Коммерсантъ (Украина)», 30 ապրիլի 2013թ., http://www.kommersant.ua/news/2182837

[9] «Несколько вопросов к украинской власти», http://vybor.ua/article/economika/neskolko-voprosov-k-ukrainskoy-vlasti.html, 3 մայիսի 2013թ.:

Ըստ էության, Ուկրաինան կանգնած է ճակատագրական ընտրության առջև. կամ մնալ հետխորհրդային տարածքի՝ իր համար սովորական շուկայում, կամ արմատապես փոխել, իսկ փաստացի՝ ստեղծել գրեթե նոր տնտեսություն և փորձել նվաճել սպառման նոր շուկաներ:

Հարցն այն է, թե արդյոք կհաջողվի նրան անցումային շրջանում խուսափել դեֆոլտից և սոցիալական պայթյունից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում երկրի իրավիճակը, 1990-ական թթ. ԵՄ-ին միացած պետությունների համեմատ, շատ ավելի անբարենպաստ է, իսկ հեռանկարները՝ շատ ավելի աղոտ: Թեկուզն այն պատճառով, որ վերոնշյալ պետությունները Եվրամիություն մտնելու երաշխիքներ ունեին, իսկ Ուկրաինայի համար «Ասոցիացված գործընկերության մասին համաձայնագրի» ստորագրումը նշանակում է «մերձեցման» լոկ առաջին (և ոչ վերջին) փուլի սկիզբ, որը տասը տարուց պակաս չի ձգվի:

Իհարկե, հետխորհրդային տարածքի յուրաքանչյուր պետություն իրեն հատուկ հարաբերություններ է հաստատել Եվրամիության հետ, և ձևավորվող Եվրասիական տնտեսական միության հետ նույնպես այդ հարաբերությունները տարբեր կերպ են կառուցվում: Բայց, մեր կարծիքով, այլ երկրների փորձի ուսումնասիրությունը կարող է և պետք է օգնի Հայաստանին խուսափել հիասթափություններից և սխալներից, ավելի վստահ կողմնորոշվել և իր համար առավելագույն արդյունավետությամբ մասնակցել ինտեգրացիոն գործընթացներին:

ԼՈՒՐԵՐ

Սերբիան և Աֆղանստանը դարձել են ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի դիտորդներ

Սերբիայի Հանրապետության Ժողովրդական սկուպշչինան և Աֆղանստանի Իսլամական Հանրապետության Ազգային ժողովը ստացել են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովի (ՀԱՊԿ ԽՎ) դիտորդի կարգավիճակ, տեղեկացրել է ՌԴ Դաշնության խորհրդի փոխնախագահ Յուրի Վորոբյովը: Այս որոշումն ընդունվել է Սանկտ Պետերբուրգում կայացած ՀԱՊԿ ԽՎ նիստում: «Ռուսաստանը՝ որպես կազմակերպության անդամ, հավանություն է տալիս դրանում նոր կազմակերպությունների մուտքին: Բացի դրանից, այդ երկրների խորհրդարանական պատվիրակությունների հետ փոխգործակցությունը կօգնի մեզ ազդել այդ տարածաշրջանների իրավիճակի վրա»,- նկատել է ռուս սենատորը: Յուրի Վորոբյովը նշել է, որ նոր կարգավիճակ ստանալուց հետո այդ երկրների խորհրդարանների պատվիրակությունները մշտապես ներկա են լինելու ՀԱՊԿ ԽՎ նիստերին և մասնակցելու են իրավական հարցերի քննարկմանը:

http://www.council.gov.ru

ՀԱՊԿ-ում ավարտվել է հավաքական ավիացիոն ուժեր ստեղծելու մտահղացման նախապատրաստությունը

ՀԱՊԿ-ում ավարտվել է հավաքական ավիացիոն ուժերի ստեղծման մտահղացման նախապատրաստությունը: Այս մասին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հանդիպման ժամանակ

տեղեկացրել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, հաղորդել են Բելառուսի նախագահի մամլո ծառայությունում: Նախագահին զեկուցել են 2012թ. դեկտեմբերին Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ) ընդունած որոշումների իրագործման ընթացքի մասին: «Մենք սկսել ենք իմ կարծիքով բեկումնային այն որոշումների իրագործումը, որոնք նախագահներն ընդունել են դեկտեմբերին ՀԱԽ հերթական նստաշրջանում, այդ թվում և այն որոշումների, որոնք փաստացի վերաբերում են ռազմական համագործակցության բարեփոխմանը, որակապես նոր մակարդակ դուրս գալուն»,- նշել է գլխավոր քարտուղարը: Նիկոլայ Բորդյուժան հիշատակել է ՀԱՊԿ Հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ ընդունված որոշումը: Այդ ուժերի մեջ ներառվելու են կազմակերպության տարբեր ռազմական կառույցներ: «Այսօր մենք ավարտեցինք ՀԱՊԿ շրջանակներում հավաքական ավիացիոն ուժերի՝ որպես լրացուցիչ բաղադրիչի, ստեղծման մտահղացման պատրաստումը: Այդ բաղադրիչը թույլ կտա իրականացնել հնարավոր գործողությունների ավիացիոն ծածկումը, ապահովել կազմակերպության այս կամ այն ուժի հնարավոր փոխադրումը՝ անվտանգության ապահովման ինչ-ինչ խնդիրների լուծման անհրաժեշտության պարագայում: Եվ այժմ աշխատում ենք հատուկ գործողությունների հավաքական ուժերի ստեղծման մտահղացման վրա»,- ասել է գլխավոր քարտուղարը:

http://www.belvpo.com

Եվրահանձնաժողովը երաշխավորում է Ուկրաինայի հետ ասոցիացման համաձայնագիր ստորագրել նոյեմբերին

Եվրահանձնաժողովի անդամների կոլեգիան որոշում է ընդունել սկսելու Ուկրաինայի հետ ասոցիացման համաձայնագրի հնարավոր ստորագրման տեխնիկական պատրաստությունը՝ նոյեմբերին

«Արևելյան գործընկերության» Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովում ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու ստեղծման համաձայնագրի ստորագրմամբ: Միևնույն ժամանակ, համաձայնագրի ստորագրումը կախված կլինի Ուկրաինայի կողմից որոշակի չափանիշների կատարումից, ինչը գնահատվելու է առաջիկա կես տարվա ընթացքում: «ԵՄ-ն ընդգծում է, որ համաձայնագիրը կստորագրվի միայն այն դեպքում, եթե Ուկրաինան համապատասխան քաղաքական պայմաններ ստեղծի»,- նշել են Եվրամիության ղեկավար ինստիտուտում: Եվրահանձնաժողովում հիշեցրել են այն չափանիշների մասին, որոնք երեք ոլորտների վերաբերյալ սահմանվել են ԵՄ արտաքին գործերի խորհրդի 2012թ. դեկտեմբերի 10-ի եզրակացություններում. դրանք գնահատվելու են անդամ երկրների կողմից Վիլնյուսի գագաթաժողովի նախօրեին: «Նախքան ստորագրումը թույլ տալը, անդամ երկրները պետք է բավական ժամանակ ունենան ներքին միջոցառումներ իրականացնելու համար, ներառյալ խորհրդատվություններն ազգային խորհրդարանների հետ: Նկատի ունենալով համաձայնագրի ծավալը և բարդությունը՝ այդ գործընթացը կարող է շարունակվել, առնվազն, վեց ամիս»,- ԵՄ ներսում որոշում ընդունելու գործընթացի առանձնահատկությունները ճշտել են Եվրահանձնաժողովում:

http://gazeta.ua

Հայկական հանրություն

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

*Արեստակես Սիմավորյան**

Ստամբուլի հայ առաքելական և ավետարանական համայնքներին պատկանող դպրոցներից զատ, Հայության կրթադաստիարակչական գործում մեծ գործ են կատարել և այսօր էլ այդ առաքելությունը շարունակում են իրականացնել հայ կաթողիկե համայնքի Մխիթարյան դպրոցները։ Մինչև Հայոց մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում գործում էին տասնյակ Մխիթարյան դպրոցներ։ Ցեղասպանության տարիներին՝ 1915-1923թթ., ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Իզմիրի և կայսրության արևմտյան տարածքներում գործող Մխիթարյան դպրոցները հիմնահատակ ավերվեցին և ոչնչացվեցին։ Մինչդեռ Ստամբուլի Մխիթարյան դպրոցները խուսափեցին նման ճակատագրից։

Հանրապետական Թուրքիայի հռչակումից (1923թ.) հետո նախ արգելվեց Ստամբուլի Մխիթարյան դպրոցներում օտարազգիների ուսում ստանալը. դպրոցները դիտվում էին որպես փոքրամասնության վարժարաններ, ուստի, թույլատրվեց միայն հայկական ծագումով աշակերտներ ընդունել, իսկ տնօրեններ նշանակել միայն աշխարհականների՝ հոգևորականների փոխարեն, ելնելով լաիցիզմի (աշխարհիկության) դրույթներից։

---

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար։

Հետագայում՝ 1942-1943թթ., Թուրքիայի կրթության նախարարությունը փոքրամասնությունների վարժարանների փոխտնօրեններ էր կարգում հիմնականում թուրքերի, ինչը չողջունվեց թե՛ համայնքի և թե՛ Մխիթարյան հայրերի կողմից[1]: Կառուցվածքային տեսանկյունից հայ համայնքի դպրոցներն անընդհատ ենթարկվել են փոփոխության, և արդյունքում՝ Մխիթարյան դպրոցները ևս կորուստներ ունեցան՝ հատկապես աշակերտների նվազման տեսքով: Կարևոր է փաստել, որ պետությունն օրենսդրորեն վերահսկողություն է սահմանում թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ դպրոցի ղեկավարման և ուսուցիչների նշանակման վրա[2], և դա վերաբերում է կրոնական-ազգային փոքրամասնություններին պատկանող բոլոր կրթական կառույցներին:

Այսօր Ստամբուլում գործում են հայ կաթողիկե համայնքին պատկանող 4 դպրոցներ, որոնք ենթարկվում են կրթության նախարարությանը: Դրանք են՝

- Վիեննայի Մխիթարյան միաբանության Բանկալթիի վարժարանը, որն ունի մանկապարտեզ, նախակրթարան և միջնակարգ բաժիններ: Վարժարանը երկսեռ է[3]:
- Բոմոնթիի Մխիթարյան վարժարանը[4]:
- Սամաթիայի Անարատ Ցղութեան վարժարանը:
- Բանկալթիի Անարատ Ցղութեան վարժարանը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են հայ կաթողիկե համայնքի վարժարանների մասին 2010թ. տվյալներ[5], որտեղ բացակայում են Բանկալթիի Անարատ Հղության վարժարանի վերաբերյալ տեղեկություններ.

[1] Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հատոր Ա, Իսթանպուլ, 2008, էջ 48:

[2] *Ռուբեն Մելքոնյան,* Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, «21-ՐԴ ԴԱՐ», թիվ 4 (38), 2011, էջ 50:

[3] Վիեննայի Մխիթարյան միաբանության Բանկալթիի վարժարանի պաշտոնական կայք, http://www.pangaltilisesi.k12.tr/default.asp

[4] Բոմոնթիի Մխիթարյան վարժարանի պաշտոնական կայք, http://www.bomontiermeni.k12.tr/

[5] *Ռուբեն Մելքոնյան,* Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, «21-ՐԴ ԴԱՐ», թիվ 4 (38), 2011, էջ 50:

Աղյուսակ 1

Վարժարան	Մանկա-պարտեզ			Նախա-կրթարան			Լիցեյ			Ընդամենը		
	Աղջիկ	Տղա	Ընդ.	Աղջիկ	Տղա	Ընդ.	Աղջիկ	Տղա	Ընդ.	Աղջիկ	Տղա	Ընդ.
Բանկալ-թիի Մխի-թարյան (մաս-նավոր)	21	20	41	95	80	175	36	29	65	152	129	281
Սամա-թիայի Անարատ հղության	6	7	13	20	27	47	-	-	-	26	34	60
Բոմոնթիի Մխի-թարյան	1	-	1	5	18	23	-	-	-	6	18	24

Վերջին ժամանակաշրջանում Ստամբուլի Մխիթարյանների մոտ ուսանելու են գալիս ոչ միայն կաթոլիկ հայեր, այլև առաքելական համայնքի անդամներ, խառնամուսնություններից ծնված երեխաներ: Այս առիթով հետաքրքիր պարզաբանումներ է տվել Պոլսո Մխիթարյան վարժարանի տնօրեն Գարեգին Պարսամյանը. *«Օրեցօր աճում են խառնամուսնությունները: Նրանք սերունդ են տալիս: Թեև այս երեխաներից ոմանք անձնագրով նշված են որպես մուսուլման, սակայն մեր դպրոցներում ստանում են հայ քրիստոնյայի դաստիարակություն: Մեծանալու դեպքում իրենք են որոշելու իրենց ազգային ինքնությունը»[6]:* Պահանջված կարգի համաձայն՝ նախկինում հայկական վարժարաններ կարող էին հաճախել միայն հայ ծնողներ ունեցող երեխաները, սակայն կրթության նախարարությունը փոխել է այդ կարգը: Այժմ վարժարաններ կարող են հաճախել նաև այն երեխաները, որոնց ծնողներից միայն մեկն է հայ:

[6] *Vercihan Ziflioglu,* Armenian schools open doors to a different audience, Hürriyet Daily News, 30.01.2011.

Բանկալթի հայկական վարժարանի աշակերտներն աչքի են ընկել մի շարք համարձակ նախաձեռնություններով՝ թուրքական դասագրքերում հակահայկական արտահայտությունների հետ կապված: Թուրքիայի ազգային կրթության նախարարի հետ հանդիպման ժամանակ վարժարանի սաները հայտնել էին իրենց անհանգստությունը դպրոցական դասագրքերում տեղ գտած հակահայկական արտահայտությունների վերաբերյալ՝ շեշտելով, որ լավ կլինի, եթե դրանք հանվեն: Նախարարն էլ հանձնարարել է աշակերտներին իրեն ուղարկել հակահայկական արտահայտությունները: Հայ աշակերտները կատարել են հանձնարարությունը, դասագրքերում առկա հակահայկական արտահայտությունները գրանցել և ուղարկել են նախարարին[7]:

Ի տարբերություն Բանկալթիի՝ Բոմոնթի Մխիթարյան դպրոցը վերջին մի քանի տարիներին հայտնվել էր լինել-չլինելու խնդրի առջև: Բանն այն է, որ դպրոցի շենքը «1936թ. հայտարարագրի» (1936 *Beyannamesi*) զոհ էր դարձել: 1936թ. հայկական, հունական և հրեական համայնքներից պահանջվեց ներկայացնել իրենց պատկանող բոլոր համայնքային կալվածքների ցուցակը, որը կցվեց 1935թ. ընդունված 2762 թվակիր Կալվածքների օրենքին որպես հավելված և ստացավ «1936թ. հայտարարագիր» անվանումը: 1936-1971թթ. զանազան դրդապատճառներով մի շարք տներ, հողակտորներ կամ կալվածքներ կտակի, նվիրատվության կամ ուղղակի վաճառքի միջոցով փոխանցվեցին համայնքային տարբեր խորհուրդների, սակայն, սկսած 1974 թվականից, թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ «1936թ. հայտարարագրում» չնշված կալվածքները չեն կարող համայնքային սեփականություն համարվել: Դրանից հետո իշխանությունների կողմից հարուցվեցին դատական գործեր, և Կալվածքների տնօրինության ու գանձապետարանի միջոցով այդ կալվածքները պետականացվեցին[8]:

[7] Հայկական վարժարանը՝ լավագույններից մեկը Ստամբուլում..., http://daily.am/?p=4862&l=am
[8] *Ռուբեն Մելքոնյան,* Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության, 1920-ականներից մինչև մեր օրերը, Երևան, 2010, էջ 33, *Ավագյան Արսեն, Մելքոնյան Ռուբեն,* Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Երևան, 2009, էջ 32-48:

Կառույցը, «36-ի հայտարարագրի» վրա հիմնված դատական որոշմամբ, 1985թ. փոխանցվել էր Այաշի քաղաքապետարանին: Վաքըֆի (կալվածք) ղեկավարությունը, որն ստիպված էր վարձ վճարել այն շենքի համար, որը գնել էր ինքը, դիմել էր դատարան՝ 2011 թվականին ուժի մեջ մտած օրենքի դրույթում տեղ գտած որոշման շրջանակներում, որը նախատեսում է հասարակական հաստատությունների անվամբ գրանցված գույքերի վերադարձը համայնքային վաքըֆներին: Ստամբուլի 13-րդ հիմնարար իրավունքների դատարանում քննված սույն դատական գործն ավարտվեց հետևյալ վճռով. դպրոցական շենքը վերադարձնել վաքըֆին: Բոմոնթիի Մխիթարյան վաքըֆի ղեկավար Ռիտա Նուրնուրը մեծ գոհունակություն է հայտնել այս փաստի կապակցությամբ՝ ասելով, թե սույն դատական վճռի շնորհիվ վերացվել է նաև դպրոցի ապագայի անորոշության հարցը[9]:

Բոմոնթի Մխիթարյան դպրոցը հայտնվել էր աղմկահարույց պատմության մեջ. դպրոցի շենքի մուտքի առջև փակցված է եղել ցուցանակ Քեմալ Աթաթյուրքի՝ Թուրքիայում տարածված հայտնի արտահայտությամբ՝ ***«Երջանիկ եմ, որ թուրք եմ»:*** Վարժարանի տնօրինությունը պարտադրեց տեղական ինքնակառավարման մարմիններին հանել այն, ինչը ըժգոհության ալիք բարձրացրեց ինչպես հասարակությունում, այնպես էլ մամուլում: Փոքրամասնություններին պատկանող դպրոցներում թուրքեր չեն սովորում, և հետաքրիր է, որ հատկապես նման դպրոցներն են հայտնվում այդպիսի իրավիճակում:

Այս կապակցությամբ հետաքրքիր պարզաբանում է տալիս հայ համայնքի ներկայացուցիչ Սաաուն Էսթուքյանը. *«Սա հայերին և դպրոցում կրթություն ստացող հայ երեխաներին ուղղված ուղերձ է: Ավելին, Թուրքիայի ազգային հիմնի կատարման մրցույթները անց են կացվում առաջին հերթին ազգային փոքրամասնությունների դպրոցներում»:*

[9] Bomonti Mıhitaryan Okulu'nun 27 yıllık mağduriyeti son buldu, http://agos.com.tr/haber.php?seo=bomonti-mihitaryan-okulunun-27-yillik-magduriyeti-son-buldu&haberid=3197, *2012/11/03:*

Նույն իրավիճակում է հայտնվել Սամաթիայի թաղամասի առաքելական համայնքին պատկանող Սահակյան Նունյան հայկական դպրոցը: Դպրոցի հոգաբարձու Ֆիլոր Ուլուքը բավական հիմնավոր պարզաբանումներ է տալիս. *«Սեփական էթնիկ ինքնությունը մերժող մի ժողովուրդ ինչպե՞ս կարող է սեփական լեզվով ուսում ստանալ: Մեր երեխաները մեզանից հարցանք են պահանջում: Երեխաս մի օր ինձ ստախոս անվանեց: Իմ այն հարցին, թե ինչու-, պատասխանեց, որ մենք հայ ենք, իսկ դպրոցում մեզ ասում են, որ դուք թուրք եք»*[10]:

Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ազգային փոքրամասնությունների հանդեպ վարվող պետական քաղաքականությունում, անկախ նրանից, թե ինչ լծակներ ու մեթոդներ են ընտրվում, միևնույն է, դավանանքային տարբերությունը (լինի առաքելական, թե կաթոլիկ) էական դեր չի կատարում. առաջնայինն ազգայինն է, և այսպիսի խնդիրների առաջ են կանգնում ոչ միայն վերոհիշյալ համայնքների անդամները, այլև նրանց համայնքապատկան կառույցները:

Մխիթարյան դպրոցները, ըստ թուրքական աղբյուրների, բավական բարձրորակ կրթություն են ապահովում: Վարժարանի աշակերտների բարձր առաջադիմության շնորհիվ 2012թ. Բանկալթիի վարժարանը Ստամբուլի 917 վարժարանների շարքում հայտնվել է լավագույն տասնյակում[11]: Բոլոր շրջանավարտները հեշտությամբ հաղթահարում են նույնիսկ աշխարհի լավագույն համալսարանների ընդունելության քննությունները:

Այսպիսով, թեև Ստամբուլի հայ կաթոլիկ համայնքը մեծաթիվ չէ և առօրյա կենսագործունեության մեջ բախվում է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների, սակայն դպրոցների առումով իրավիճակը համեմատաբար բարվոք է: Համայնքն ունի ժամանակակից պահանջներին համապատասխանող և զարգացող կրթական հաստատություններ:

---

[10] *Mehmet Akgül,* Bu fotoğraftaki yanlışı bulun, http://www.evrensel.net/news.php?id=14753
[11] Pangaltı Mıkhitaryan Ermeni Lisesi İstanbul'un en başarılı 10 Lise sıralamasında ilk 10 da, http://hyetert.blogspot.com/2012/04/pangalt-mkhitaryan-ermeni-lisesi.html

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Վահրամ Հովյան**

Ցեղասպանության հետևանք հանդիսացող հայկական սփյուռքը տասնամյակների ընթացքում ենթարկվել է որոշակի փոխակերպման՝ կապված նրա ներսում տեղի ունեցող «ժողովրդագրական» տեղաշարժերի հետ: Այդ փոխակերպման ըմբռնումը կարևոր նշանակություն ունի ինչպես մարտահրավերներին դիմագրավելու, այնպես էլ ընձեռված հնարավորություններից առավելագույնս օգտվելու տեսանկյունից:

Փոխակերպման էությունը

Ցեղասպանության հետևանքով սփյուռքի հայկական համայնքներ ձևավորվեցին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Եգիպտոսում և այլն: Եղեռնից փրկված հայերի խմբերը հաստատվեցին նաև եվրոպական երկրներում՝ Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա և այլուր, ինչպես նաև Ամերիկայում՝ ԱՄՆ, Կանադա և այլն:

Հետագայում, սակայն, նկատվեց հայերի գաղթ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից դեպի Արևմուտք՝ ԱՄՆ, Կանադա, արևմտաեվրոպական զարգացած երկրներ: Այդ մասին է վկայում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայ համայնքների թվաքանակի շարունակական նվազումը՝ արևմտյան երկրների հայ համայնքների թվաքանակի շարունակական մեծացման հետնապատկերին:

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

Այսպես, եթե 1960-ական թթ. սկզբին ԱՄՆ հայության թվաքանակը կազմում էր մոտ 250 հազ[1]., ապա 21-րդ դարի սկզբին այն կազմում է մոտ 1.2 մլն[2]։ Փոխարենը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, օրինակ, Սիրիայում, եթե նույն 1960-ական թթ. սկզբին հայերի թվաքանակը կազմում էր մոտ 150 հազ[3]., ապա նախքան սիրիական վերջին ճգնաժամի սկիզբը այդ թիվը կազմում էր 65-70 հազ.[4]։

Պատկերն առավել հստակ և առարկայնորեն ցույց տալու համար ստորև բերված աղյուսակներում ներկայացված է Մերձավոր և Միջին Արևելքի ու արևմտյան առավել հայահոծ երկրներում (Թուրքիա, Իրան, Լիբանան, Սիրիա, ԱՄՆ, Ֆրանսիա) հայերի թվաքանակի դինամիկան 1960-ական թթ. սկզբի համեմատ։

Աղյուսակ 1

Հայերի թվաքանակը Մերձավոր և Միջին Արևելքի առավել հայահոծ երկրներում[5]

Երկիրը	Ժամանակը	
	1960-ական թթ. սկիզբ	21-րդ դարի սկիզբ
Թուրքիա	200.000	80.000
Իրան	140.000	80.000
Սիրիա	150.000	65-70.000
Լիբանան	120.000	70-80.000

[1] *Գասպարյան Ս.,* Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կյանքի ուրվագիծ, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1962, էջ 246։

[2] «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 33։

[3] *Գասպարյան Ս.,* նշվ. աշխ., էջ 246։

[4] «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 508։

[5] Աղյուսակների աղբյուրները՝ *Գասպարյան Ս.*, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կյանքի ուրվագիծ, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1962, էջ 246 և «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., Հայկ. հանրագիտարան. հրատ., 2003)

Աղյուսակ 2

Հայերի թվաքանակն արևմտյան առավել հայահոծ երկրներում

Երկիր	Ժամանակը	
	1960-ական թթ. սկիզբ	21-րդ դարի սկիզբ
ԱՄՆ	250.000	1.200.000
Ֆրանսիա	130.000	450.000

Մերձավոր և Միջին Արևելքի հայության՝ դեպի ԱՄՆ, Կանադա, եվրոպական երկրներ արտագաղթին նպաստում են հետևյալ հիմնական գործոնները.

1. *Կյանքի որակի ավելի բարձր մակարդակն արևմտյան երկրներում*: Ավելի ապահով կյանքի և բարեկեցության ակնկալիքով 20-րդ դարի կեսից Մերձավոր և Միջին Արևելքի հայությունը սկսեց արտագաղթել դեպի Արևմուտքի զարգացած երկրներ:

2. *Արևմտյան սոցիալ-մշակութային միջավայրի նկատմամբ հեշտ հարմարվողականությունը*: Հայերը, լինելով քրիստոնյա, ավելի հեշտ են յուրացնում եվրոպական և ամերիկյան սոցիալ-մշակութային բարքերը և, հետևաբար, ավելի հեշտությամբ են ինտեգրվում այդ հասարակություններում, քան մուսուլման ժողովուրդները: Արդ, իրենց ավելի հոգեհարազատ եվրոպական և ամերիկյան սոցիալ-մշակութային միջավայրերը խթան էին հանդիսանում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայության՝ դեպի Արևմուտք արտագաղթի համար:

3. Տիրապետող իսլամական միջավայրը: Այն որոշակիորեն խորթ է հայերի համար: Չնայած հիմնականում աշխարհիկ պետության նկարագրին և հայերի նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողականությանը, այնուամենայնիվ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում չեն եղել քաղաքական և քաղաքացիական լայն ազատություն-

ներ, որոնք ինքնադրսևորման լայն հնարավորություններ ընձեռեն հայությանը: Այս հանգամանքով է բացատրվում այդ երկրների հայ համայնքների քաղաքական պասիվությունը:

Իսկ վերջին տասնամյակներին նկատվում է իսլամի վերելք տարածաշրջանում: Դրա ապացույցներն են.

- 1979թ. իսլամական հեղափոխությունն Իրանում, որի արդյունքում այդ երկիրը շահական աշխարհիկ միապետությունից վերածվեց կրոնապետության (Իրանի Իսլամական Հանրապետության),
- իսլամիստական կողմնորոշում ունեցող Արդարություն և զարգացում կուսակցության գտնվելը Թուրքիայի իշխանության ղեկին 2002 թվականից,
- 2011-ից սկիզբ առած «արաբական գարունը», որի արդյունքում «...ազգայնական քաղաքական ուժերը կորցնում են իշխանությունը և փոխարինվում իսլամիստ ծայրահեղականներով»[6]:

4. Ներքին և արտաքին ցնցումները: Մերձավոր և Միջին Արևելքը փոթորկահույզ տարածաշրջան է, որի երկրները մշտապես գտնվում են արտաքին և ներքին ցնցումների մեջ: Արտաքին ցնցումները դրսևորվում են պատերազմների ձևով՝ արաբա-իսրայելական հակամարտություն, իրաք-իրանական պատերազմ (1980-88թթ.), Ծոցի պատերազմ (1990թ.), իրաք-ամերիկյան պատերազմ (2003թ.) և այլն: Իսկ ներքին ցնցումները դրսևորվում են այդ երկրներում հեղափոխությունների, քաղաքացիական պատերազմների, հեղաշրջումների և անկայունության ձևերով: Այս առումով նշանավոր են 1975-90թթ. լիբանանյան քաղաքացիական պատերազմը, 1979թ. իսլամական հեղափոխությունն Իրանում: Ինչ վերաբերում է Սիրիային, ապա «1949-էն մինչեւ 1970 Սուրիոյ մէջ տեղի ունեցած են մօտաւորապէս 15 յե-

[6] Syria Surge: Expert says toppling Assad's regime would endanger the Armenian community http://armenianow.com/news/politics/34004/middle_east_politics_impact_armenia

դաշրջումներ ...»[7]: Իսկ մեր օրերում ծավալվող «արաբական գարունը» Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի անկայունության ամենաթարմ ապացույցն է: Այսպիսի փոթորկահույզ իրավիճակը մշտական սպառնալիքի տակ է պահում հայ համայնքների անվտանգությունը և նորմալ կենսագործունեությունը:

Ինչևէ, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներից հայերի մեծամասշտաբ գաղթը դեպի արևմտյան երկրներ էականորեն ազդում է Սփյուռքի ներքին կառուցվածքի վրա: Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն աստիճանաբար փոքրանում են, փոխարենը՝ մեծանում և ավելի ու ավելի ազդեցիկ են դառնում արևմտյան որոշ երկրների հայ համայնքներ:

Այսպիսով, Սփյուռքի ներքին փոխակերպման արդյունքում աշխարհով մեկ տարածված հայկական համեմատաբար փոքրաթիվ համայնքների կողքին հետզհետե հզորանում են մի քանի երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի[8], Ֆրանսիայի առանցքային հայ համայնքները:

Մարտահրավերներ և հնարավորություններ

Սփյուռքի՝ վերը նկարագրված փոխակերպումն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր:

Գլխավոր մարտահրավերն այս առնչությամբ հայապահպանության խնդրի սրումն է: Հայտնի է, որ հայերն արևմտյան երկրներում, սերտորեն ինտեգրվելով իրենց երկրների հասարակություններին, ավելի հեշտ և արագ են կորցնում ազգային ինքնության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մայրենի լեզուն, հաղորդակցությունը ազգային մշակույթին և պատմությանը, ազգային ինքնագիտակցությու-

[7] *Սագօ Արեան,* «Արաբական գարուն»-ը և Միջին Արևելքի հայությունը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6888

[8] Ավանդաբար հայահոծ Ռուսաստանում, կապված հետխորհրդային շրջանում Հայաստանից դեպի այդ երկիր արտագաղթի հետ, հայերի թիվը էլ ավելի է մեծացել՝ կազմելով 2.2 մլն մարդ, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 457:

նը և այլն: Հատկապես սուր է լեզվի խնդիրը, քանի որ ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և այլ քրիստոնյա աշխարհիկ երկրների հայերի շրջանում սերնդեսերունդ ավելի է նվազում մայրենի լեզվին տիրապետողների թիվը: Իսկ նման իրավիճակում «...նրանց հետագա ազգային պատկանելությունը դառնում է անհայտ ու մշուշապատ: Կորցնելով լեզուն և ազգային բնավորության ու հոգեբանության հիմնական գծերը, հետզհետե մթագնվում են ազգային ինքնագիտակցությունն ու ազգային շահի գիտակցումը»[9]:

Հայերի ուծացմանը նպաստող մեկ այլ կարևոր գործոն են խառնամուսնությունները, որոնք ավելի ու ավելի են տարածվում արևմտյան երկրների և Ռուսաստանի հայերի շրջանում:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում հայերը որոշակիորեն առանձնացված են և տարբերվում են տիրապետող իսլամական միջավայրից, ինչը զգալիորեն նպաստում է ազգային ինքնության հատկանիշների (լեզու, կրոն, մշակույթ, ազգային ինքնագիտակցություն) պահպանմանը և նվազագույնի հասցնում այլազգիների հետ ամուսնության դեպքերը, ինչը չի կարելի ասել արևմտյան երկրների և Ռուսաստանի հայության մասին: Այս երկրներում հայերին հոգեհարազատ սոցիալ-քաղաքակրթական, արժեհամակարգային միջավայրը, ինչպես նաև քաղաքացիական ազատությունները միմյանց նկատմամբ բաց են պահում հայ համայնքներին և տվյալ երկրների հասարակություններին, ինչը լուրջ հիմք է փոխներթափանցման համար, սակայն, միաժամանակ լուրջ սպառնալիք է ստեղծում ազգային ինքնության պահպանմանը:

Առկա իրավիճակը, սակայն, մարտահրավերների հետ մեկտեղ ենթադրում է նաև որոշակի հնարավորություններ, որոնցից օգտվելը զգալի օգուտներ կբերի Հայաստանին և Սփյուռքին: Այդպիսի հնարավորություններից կարելի է առանձնացնել երեքը.

[9] *Հակոբյան Ս.,* Փիլիսոփայության հիմունքներ, Եր., Երևանի համալս. հրատ., 1994, էջ 284:

1. Հայկական լուրջ կապիտալի ձևավորում: Արևմտյան երկրները, ինչպես նաև Ռուսաստանը, դասվում են տնտեսապես զարգացած երկրների շարքին: Այդ երկրներում տիրում է ներքին կայունությունը: Այդ հանգամանքը, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ զբաղվելու լայն հնարավորությունները թույլ են տալիս տեղի հայերին ծավալել ակտիվ տնտեսական գործունեություն, ձեռք բերել տնտեսական կարողություններ, ինչի արդյունքում էլ ձևավորվում է հայկական սփյուռքի կապիտալի հիմնական մասը: Պատահական չէ, որ սփյուռքահայ նշանավոր գործարարները, մեծահարուստները հիմնականում արևմտյան երկրներից ու Ռուսաստանից են (Ք.Քրքորյան, Վ.Հովնանյան, Ա.Աբրահամյան և այլք): Թեև կապիտալ ասելով հիմնականում հասկացվում է ֆինանսատնտեսական կարողությունը, սակայն դրա կողքին ավելորդ չի լինի որպես հնարավորություն դիտարկել նաև արևմտյան երկրների և Ռուսաստանի կառավարող կառույցներում, ֆինանսական և այլ հաստատություններում ընդգրկված և բարձր դիրքերի հասած հայերին:

2. Լոբբիստական գործունեության ծավալում: Արևմտյան երկրներն իրենց քաղաքացիներին օժտում են հասարակական-քաղաքական գործունեություն ծավալելու ժողովրդավարական և քաղաքացիական լայն իրավունքներով և ազատություններով: Սույն հանգամանքը, լավ ինքնակազմակերպվելու դեպքում, հնարավորություն է տալիս հայ համայնքներին ծավալելու հաջող լոբբիստական գործունեություն՝ ի շահ թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի: Այստեղ կարևոր գործոն է նաև այն հանգամանքը, որ Արևմտյան երկրները (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա), ինչպես նաև Ռուսաստանը ժամանակակից աշխարհի «ծանրքաշային» երկրներն են թե՛ տնտեսապես և թե՛ ռազմաքաղաքական ազդեցության իմաստով: Ուստի, հատկապես այդ երկրներում իրականացվող լոբբիստական գործունեությունն ունի կարևոր նշանակություն:

3. Մտավոր ներուժի մեծացում: Արևմտյան երկրների և Ռուսաստանի առավելությունը մյուս երկրների նկատմամբ, բացի տնտեսական և ռազմաքաղաքական ազդեցությունից, նաև զարգացած գիտատեխնիկական ենթակառուցվածքներ ունենալն է: Հետևաբար, այդ երկրներում կրթություն ստացած և գիտատեխնիկական հաստատությունների գործունեության մեջ ընդգրկված հայերը կազմում են Սփյուռքի՝ բարձր չափանիշներին համապատասխանող մտավոր ներուժը: Սա նշանակում է, որ ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի հայ համայնքները հնարավորություն ունեն տալու բարձրորակ կադրեր՝ գիտության ամենատարբեր բնագավառներում: Իսկ այդ ներուժի ճիշտ գնահատումը և արդյունավետ օգտագործումը կարող է զգալիորեն նպաստել Հայաստանի զարգացմանը:

Այսպիսով, Սփյուռքում տեղի ունեցող «ժողովրդագրական» տեղաշարժերի հետևանքով այսօր, մի կողմից, ավելի սուր է դրված ազգային ինքնության պահպանման հարցը: Մյուս կողմից, սակայն, «...հայկական սփյուռքի հիմնական մասը կենտրոնացած է զարգացած արդյունաբերական երկրներում՝ արդյունավետ գործառող ժողովրդավարական ինստիտուտներով»[10], ինչը, զուգորդվելով բարձր մտավոր ներուժի հետ, նոր հնարավորություններ է բացում համազգային նպատակների իրականացման ճանապարհին:

[10] *Енгоян А.П.,* Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Ер., Изд-во РАУ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՄԱՄԲ

Գրիգոր Գրիգորյան[*]

Ակտիվ վեճեր են ընթանում պաշտոնական Երևանի արտաքին քաղաքական գերակայությունների և նախապատվությունների վերագնահատման և/կամ վերաճշտման անհրաժեշտության շուրջ՝ Եվրասիական միության վերաբերյալ բանավեճերի համատեքստում: Այդ վեճերը հատկապես ակտիվացան Հայաստանում նախագահի ընտրությունների հետ կապված, որոնց հետ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ միշտ որոշ փոփոխությունների հույսեր կամ ակնկալիքներ են կապվում: Այս առնչությամբ ծագում են մի շարք հարցեր, որոնց մեջ գլխավորը «Պե՞տք են արդյոք Հայաստանին ինչ-որ փոփոխություններ արտաքին քաղաքականությունում, և հարկավո՞ր է արդյոք վերագնահատել արտաքին քաղաքական գերակայությունները» հարցն է: Հարցի պատասխանի զգալի մասը կախված է, նախ, ազգային անվտանգության առաջնահերթություններից, երկրորդ՝ Հայաստանի հանրության արտաքին քաղաքական նախապատվություններից և հակումներից, քանի որ պաշտոնական Երևանը չի իրականացնի հանրային կարծիքին առհասարակ չհամապատասխանող արտաքին քաղաքական գիծ: Երևանի արտաքին քաղաքականության վերաբերյալ հանրային նախասիրությունների հարցի քննարկման համար մենք կներկայացնենք Հայաստանում հանրային կարծիքի երկու հարցման տվյալները, որոնք անցկացրել է Քաղաքական և սոցիոլոգիական քոնսալթինգի ինստիտուտը (*IPSC*) 2011թ.:

---

[*] ԵՊՀ ասպիրանտ:

Առաջին հարցման շրջանակներում, որն ուղղված էր կյանքի որակի ինդեքսը պարզելուն և անցկացվել էր Հայաստանի ամբողջ տարածքում, և որին մասնակցել էին 18-ից բարձր տարիքի 2000 քաղաքացիներ, հարցվողների 82.1%-ը եղել է այն կարծիքին, թե «ավելի նախընտրելի է, եթե Հայաստանը միանա ավելի շուտ Ռուսաստանին, քան Եվրոպային»[1]: Այսպիսով, Հայաստանի քաղաքացիների զգալի մեծամասնությունը «Ռուսաստա՞ն, թե՞ Եվրոպա» համեմատության մեջ նախապատվությունը տալիս է Ռուսաստանին. «եթե միանալ, ապա գոնե Ռուսաստանին»: Ինչի՞ հետ է կապված սա: Հարցը կարող է շատ պատասխաններ ունենալ, բայց այդ նախապատվությունն, առաջին հերթին, պայմանավորված է տնտեսական գործոնով, քանի որ Հայաստանի հանրությունը ներկա պահին անհամեմատ ավելի զգայուն է արձագանքում այդ ազդակներին: Ի դեպ, Հայաստանի հանրությանն այնքան էլ չեն բավարարում բարեկեցության բնութագրիչները[2]: Այդ ամենին ավելանում է նաև այն փաստը, որ երկար ժամանակ Ռուսաստանն անվիճելի առաջատարն է այն երկրների ցանկում, որտեղից ֆիզիկական անձինք բազմամիլիոնանոց տրանսֆերտներ են ուղարկում Հայաստան երկրի բանկային համակարգի միջոցով (*Նկար 1*)[3]:

Աղյուսակից երևում է, որ դիտարկվող 8 տարիների ընթացքում Ռուսաստանն անվիճելի «դոնոր» է հանդիսացել, ինչն օբյեկտիվ գործոն է ինչպես պաշտոնական Մոսկվայի, այնպես էլ Հայաստանի հանրության համար: Դա զգալի օբյեկտիվ և սուբյեկտիվ անմիջական կապող օղակ է Ռուսաստանի և Հայաստանի հանրության բարեկեցության միջև: Ուստի, մի կողմից՝ զարմանալի չէ, մյուս կողմից էլ՝ օբյեկտիվ է այն, որ Հայաստանի բնակչության 90,9%-ը կարծում է, որ «Հայաստանի բնակչության մեծամասնությունը Խորհրդային Միու-

[1] Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2011թ., 02.08.2012, www.gov.am, էջ 79:
[2] Նույն տեղում, էջ 13:
[3] Աղբյուրները՝ ՀՀ ԿԲ 2006, 2007, 2008, 2009, 2011, 2012թթ. տեղեկագրերը, www.cba.am

թյունում ավելի լավ էր ապրում, քան հիմա»[4]: Մոսկվայի հետ կապված երբեմնի բարեկեցությունը և ընտանիքն ապահովելու այսօրվա հնարավորությունը, որը նույնպես կապված է Մոսկվայի հետ, վերածվում են ժամանակի ու փոփոխությունների վրայով դեպի Ռուսաստան նետված ուղղակի կամրջի: Հայաստանի բնակչության 90,9%-ից ավելիի բարեկեցությունն ապահովող նախկին Ռուսաստանի և բազմամիլիոնանոց տրանսֆերտների հնարավորություն ապահովող այսօրվա Ռուսաստանի տարբերությունը շոշափելի չէ շարքային քաղաքացու համար: Ահա թե ինչու Հայաստանի բնակչության 84,8%-ը կարծում է, որ «Խորհրդային Միության փլուզմամբ մենք ավելի շատ կորցրինք, քան ձեռք բերեցինք»[5]:

Նկար 1

Ֆիզիկական անձանց տրանսֆերտները Հայաստանի բանկային համակարգի միջոցով՝ըստ տարիների



Այսպիսով, Ռուսաստանը հսկայական հանրային կապիտալ ունի Հայաստանում, վերջինի հանրությունն էլ, իր հերթին, ինքնաբավության ոչ պակաս բազա ունի հանձին Ռուսաստանի: Այս փոխկապվածությունը և փոխկախյալությունը չի կարող կապված չլինել

[4] Կյանքի որակի ինդեքսը Հայաստանում 2011թ., էջ 79:
[5] Նույն տեղում:

պատճառահետևանքային կապերի իրական քաղաքականության հետ: Լա՞վ է սա, թե՞ ոչ՝ բանակռիվների ու արտաքին քաղաքական նախապատվությունների հարց է: Բայց փաստ է, որ ռազմավարական երկու գործընկերների միջև գոյություն ունի, առնվազն, հանրային և տնտեսական դրական ընկալում: Իհարկե, այս բոլոր տվյալները չի կարելի մեկնաբանել որպես կարոտ Խորհրդային Միության և ատելություն դրա փլուզումից հետո ձեռք բերված ամեն ինչի հանդեպ: Հօգուտ վերջին փաստարկի կարելի է նշել այն, որ, մի կողմից, վերոնշյալ դիրքորոշումները Ռուսաստանի և Խորհրդային Միության հանդեպ հավասարապես կիսում է Հայաստանի երիտասարդ սերունդը, բայց, մյուս կողմից, երիտասարդության կարծիքը զգալիորեն տարբերվում է «Ժողովրդի բարեկեցությունն ու խաղաղ կյանքն ավելի կարևոր են, քան անկախությունը» երկընտրանքի հարցում: Այս երկընտրանքը հօգուտ բարեկեցության են փորձում լուծել առավելագույնը 35-44 տարեկան մարդիկ, որոնց վրա է հիմնականում դրված այս հարցի լուծումն իրենց ընտանիքներում[6] (*Նկար 2*):

Քննարկման համար հետաքրքիր է նաև երիտասարդության (18-30 տարեկան) կողմից ռուսի և Ռուսաստանի ընկալումը: Սոցիալական շփումների չորս բնութագրերից երկուսում «ռուսը» զբաղեցնում է առաջին, մյուս երկուսում՝ երկրորդ տեղը, զիջելով «սփյուռքյան հայրենակիցներին»: Եվ այսպես, ընտանիքի անդամին ռուսի հետ ամուսնանալ թույլ կտա հարցվածների 61,8%-ը (75,3%-ը նախընտրում է սփյուռքահայի): «Հայաստանի քաղաքացիություն կտայի՞ք արդյոք...» հարցին «ռուսի» պարագայում համաձայն էր 79,2%-ը, իսկ 88,3%-ը համաձայն էր «սփյուռքի հայրենակցին»: Իսկ ահա «սերտ բարեկամություն անել» և «համատեղ աշխատել նույն խմբում» հարցերի պարագայում ռուսի թեկնածությանը համաձայնել է հարցվողների, համապատասխանաբար, 90,4 և 92,7%-ը («սփյուռքի հայրենակցի» հետ

[6] Նույն տեղում, էջ 80:

«սերտ բարեկամություն» անել համաձայնել է 88,1%-ը, «համատեղ աշխատել նույն խմբում»՝ 89%-ը)[7]: Այսպիսով, Հայաստանի երիտասարդների ընկալմամբ՝ իրենց և ռուսների միջև սոցիալական տարածությունը երկրորդ ամենամոտն է[8]: Իսկ եթե հաշվի առնենք, որ ամենամոտը համարվում է տարածությունը նրանց և «սփյուռքահայ հայրենակցի» միջև, ապա կարելի է պնդել, որ ռուս մարդն ամենամոտն է մնացած բոլոր ժողովուրդներից:

Նկար 2

Հայաստանի հանրության դիրքորոշումները ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հանդեպ: Հայաստանի գեոհամակարգային և աշխարհաքաղաքական դիրքորոշումների և հետխորհրդային 20 տարիների համընդհանուր ազդեցությունը տարիքային խմբերում

Վերն ասվածը պատճառահետևանքային կապի մեջ է լեզվական գործոնի հետ: Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, երիտասարդության մեծամասնությունը տիրապետում է ռուսերենին և կարևոր է համարում ռուսաց լեզվի իմացությունը: Եվ այսպես, հարցվածների 91,3%-ը տիրապետում է (բավարար, լավ, գերազանց՝ ըստ ինքնագնահատման) ռուսերենին (տե՛ս *Աղյուսակ 1*), միևնույն ժամանակ՝ հարցվածների 57,4%-ը օտար լեզուների իմացության մեջ ամենակա-

[7] Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 16:

[8] Նույն տեղում, էջ 17:

ընորը համարում է ռուսերենին տիրապետելը[9]: Գաղտնիք չէ, որ լեզվի իմացությունը նույնպես մոտեցնում է և կարևոր գործոն է հանրության արտաքին քաղաքական հակվածության համար: Այս տվյալներն ավելի հետաքրքիր են, քանի որ արտահայտվել են երիտասարդության կողմից:

Աղյուսակ 1

Օտար լեզվին տիրապետելը[10]

Ռուսերենին տիրապետումը		Անգլերենին տիրապետումը	
Չեն տիրապետում	2.1%	Չեն տիրապետում	37.7%
Վատ են տիրապետում	6.6%	Վատ են տիրապետում	18.7%
Տիրապետում են	91.3%	Տիրապետում են	43.6%
Ընդամենը	100.0%	Ընդամենը	100.0%

Ի դեպ, Հայաստանի երիտասարդությունը ռուսին ընկալում է ոչ միայն որպես այլ ազգի ամենամոտ ներկայացուցչի ու կարևոր է համարում ռուսերենի իմացությունը, այլ նաև ֆիզիկական կապ գոյություն ունի Ռուսաստանի հետ: Բանն այն է, որ, նախ, Հայաստանի երիտասարդությունն արտասահմանյան երկրներից ամենից հաճախ լինում է Ռուսաստանում: Երիտասարդության 49,4%-ն առհասարակ եղել է արտասահմանում[11], որից 33,2%-ը՝ Ռուսաստանում: Ավելին, առհասարակ արտասահմանում եղած երիտասարդության 48,2%-ը մեկնել է Ռուսաստան վերջին 3 տարիների ընթացքում[12]: Երկրորդ տեղում Վրաստանն է, ուր մեկնում է երիտասարդության 21,3%-ը (առհասարակ արտասահմանում եղածների թվի 29,6%-ը): Իսկ ահա թեև ԵՄ-ը 3-րդ տեղում է, բայց Հայաստանի երիտասարդության կողմից այցելությունների թվով գրեթե 5 անգամ զիջում է Ռուսաստանին.

[9] Նույն տեղում, էջ 84: Հատկանշական է, որ առաջին հերթին անգլերենին տիրապետելու օգտին արտահայտվել է հարցվածների 41,5%-ը, թեև ուսանողներն ավելի կարևոր են համարում անգլերենին, քան ռուսերենին տիրապետելը:

[10] Աղբյուրը՝ Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 87:

[11] Նույն տեղում, էջ 74:

[12] Նույն տեղում, էջ 75:

6,3 և 8,8%[13]: Սա նշանակում է, որ Ռուսաստանը թե՛ ավելի մոտ է, թե՛ հասանելի երիտասարդության համար, ինչը ևս մեկ գործոն է հօգուտ Ռուսաստանի: Եթե համադրենք վերոնշյալ տվյալները Հայաստանից երիտասարդության ժամանակավոր միգրացիայի զգալի պոտենցիա-լի հետ (71,6-83,5%՝ կախված նպատակից[14]), ապա հասկանալի կդառ-նա, որ Հայաստանից Ռուսաստան պոտենցիալ ժամանակավոր միգ-րանտների թիվը կարող է անհամեմատ ավելի մեծ լինել վերոնշյալ գործոնների համատեքստում: Իսկ նման միտումներն ու փաստերը հաշվի չառնելն անհնար է:

Եվ այսպես, ժամանակի տվյալ հատվածում ռուսական գործոնը Հայաստանի և նրա հասարակության համար բավական ծանրակշիռ է, քանի որ Հայաստանի հանրությունը կապված է Ռուսաստանի հետ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ զգալի կապերով: Դրանք այնքան նշանակալի են, որ դժվար է հաշվի չնստել դրանց գոյության հետ: Մյուս կողմից՝ նկատի ունենալով այն, որ Հայաստանի երիտա-սարդությունը նույնպես պակաս կապված չէ Ռուսաստանի հետ, քան ավագ սերունդը, և ռուսական ուղղությունը հասանելի է ինչպես ֆի-նանսական, այնպես էլ մշակութային իմաստով, կարելի է փաստել, որ Ռուսաստանը դեռ երկար ժամանակ կմնա Հայաստանի հանրու-թյան աշխարհայացքում: Իրերի ներկայիս դրության պարագայում կարելի է ասել, որ Ռուսաստանին է վիճակված կարևոր գործոն լինել Հայաստանի համար, իսկ վերջինին վիճակված է ունենալ զգալի «ռու-սական» պոտենցիալ սեփական հանրությունում: Այս վիճակը կպահ-պանվի, եթե չսկսվեն հանրության վերակողմնորոշման ակտիվ և լայ-նամասշտաբ աշխատանքներ: Նման բան առայժմ չկա: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է ծանրութեթև անել բոլոր դեմ և կողմ փաստարկները՝ այս կամ այն ուղղության մասին մտածելուց առաջ:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, էջ 76:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԽՈՀԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*Էդուարդ Լ. Դանիելյան**

Գարեգին Նժդեհը 1929թ. Բեյրութում հրապարակեց հայ մտավորականությանը հասցեագրված՝ ծրագրային բնույթ ունեցող «Բաց նամակները»՝ «Քննադատել - հոգեպես տառապել է նշանակում» բնաբանով [1]: Այն լույս աշխարհ եկավ հայ ժողովրդի համար ծանրագույն ժամանակաշրջանում: Հայոց ցեղասպանության միջոցով Արևմտյան Հայաստանը զավթած Թուրքիան շարունակում էր հակահայկական քաղաքականությունը: Դրան էին գումարվել Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո Խորհրդային Հայաստանի գոյության սկզբնական ժամանակաշրջանում՝ 1921թ. հայկական հողերի հաշվին օտար զավթիչների կողմից կատարված տարածքային բռնակցումները[1], ինչպես նաև երկրում սաստկացող քաղաքական բռնաճնշումները, որոնք աղետաբեր էին հայ ժողովրդի համար:

1922թ. ՌԿ(բ)Կ 12-րդ կոնֆերանի՝ «Հակախորհրդային կուսակցությունների ու հոսանքների մասին» հատուկ որոշման ընդունմանը հաջորդած տարիներին, Խորհդային Միությունում միակուսակցական (կոմունիստական) գաղափարախոսության գերակայությամբ

---

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ-խորհրդական:

[1] 1921թ. Մոսկվայի մարտի 16-ի և Կարսի հոկտեմբերի 13-ի թալանչիական խորհրդաթուրքական ապօրինի պայմանագրերով [2; 3] քեմալականները բռնազավթեցին Կարսի մարզը և Սուրմալուի գավառը (Սուրբ Մարիամ) Արարատ լեռով, իսկ Նախիջևանի տարածքում արհեստածին «Ադրբեջանի խնամակալությամբ» («այդ խնամակալությունը մեկ այլ՝ երրորդ պետության չզիջելու պայմանով»), իբրև թե, ինքնավարություն էր ստեղծվելու [4]: 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի (Կավբյուրո) ապօրինի որոշումով տեղի էր ունեցել Արցախի բռնակցումը խորհրդային Ադրբեջանին [5, c. 639; 6, c. 220], ինչպես նաև (Կավբյուրոյի հուլիսի 7-ի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի հուլիսի 16-ի նույնպես ապօրինի որոշումներով) Ջավախքի բռնակցումը խորհրդային Վրաստանին [7, էջ 285-289, 295-330]:

ամբողջատիրական, վարչահրամայական համակարգի հաստատման պայմաններում, այլ կուսակցություններն ու միությունները վերացվեցին, նրանց անդամների մի մասը կամ փախուստի դիմեց, կամ էլ վտարվեց երկրից, իսկ շատերը քաղաքական բռնաճնշումների ենթարկվելով՝ ձերբակալվեցին և գնդակահարվեցին: Նմանատիպ բռնաճնշումներ տեղի էին ունենում նաև Խորհրդային Հայաստանում [8, էջ 318-322]: Հայ հասարակական-քաղաքական մտքից բխող՝ ազգային գաղափարներ արտահայտող յուրաքանչյուր դրսևորում դաժանորեն հետապնդվում էր: Քաղաքական բռնաճնշումների սուր ծայրն ուղղվել էր ազգային գաղափարների կրողների, հայ մտավորականների՝ գիտնականների, դասախոսների, գրողների, բանաստեղծների, ռազմական գործիչների, ուսուցիչների և Հայ Առաքելական եկեղեցու ու հոգևորականության դեմ [9, 10]:

Հայ ազգին և Հայրենիքին ծառայելուն նվիրված սերնդի դաստիարակության գործում Հայկական սփյուռքը նույնպես միավորիչ ազգային գաղափարախոսության կարիք ուներ:

Գարեգին Նժդեհը, զգոնության հրամայականով նշելով, որ քաղաքական ցնցումները հոգեբանորեն անհետևանք չէին մնացել, գրել է. «Յնցւեց մեր կեանքն իր էական բոլոր կողմերով: Հսկայական փոփոխութիւններ առաջ եկան... Եվ հանրածանօթ իրողութիւն է, որ այս դէպքերը զարգացան բոլորովին հակառակ՝ մեր տրամադրութեանց՝ արտաքին իրողութիւնների թելադրութեամբ: Մենք անզօր եղանք ուղղութիւն տալ նրանց: Այս նշանակում է, թէ ներքուստ մենք պատրաստ չէինք դէպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու…»: Այդ պայմաններում նա մտորում էր հայկական անկախ պետության վերակերտման մասին, ընդ որում, հսկայական կորուստների պայմաններում, կարևոր համարելով հազարամյակների պատմություն ունեցող ազգային հոգեկերտվածքի և անկախության գաղափարի պահպանումը: Նա գրել է. «Աղէտներից ու փորձութիւններից հետո պատմութեան բերումով մեր

ժողովուրդը հասունանում է, նրա մէջ անկախութեան գաղափարը ժողովրդականանալով դառնում է հոգեբանութիւն…»: Նժդեհը, ստեղծված ծանրագույն իրավիճակին սթափ մոտենալով, արտաքին և ներքին ռազմավարական և քաղաքական բոլոր դժվարությունները (ընդգծելով պանթյուրքիզմից եկող վտանգները) հաշվի առնելով, Հայոց անկախ պետության վերականգնման նեցուկ համարելով Խորհրդային Հայաստանը, գրել է. «Բնական է, որ Հայոց պետութեան կորիզը պիտի կազմէ Խորհրդային Հայաստանը… Չլինէին մահմեդական Արեւելքի իւրայատուկ պայմանները եւ խլամ ժողովուրդի փոխյարաբերութիւնները, դարերի արիւնոտ իրողութիւններով հոգեբանութիւն դարձած անհանդուրժողութիւնը, թուրք-թաթար ժողովուրդների քաղաքական ձգտումները, գուցէ անկարելի չլինէր Խորհրդային Հայաստանի աստիճանական զարգացումը եւ աւելորդ՝ մեր մտահոգութիւնը» [1, էջ 54]:

Գարեգին Նժդեհը, որպես հմուտ ռազմագետ, Հայաստանին սպառնացող գերագույն վտանգը համարում էր հսկայական մարդկային կորուստների և օտարների կողմից կատարված տարածքային բռնազավթումների հետևանքով երկրի ռազմավարական դիրքի համար ստեղծված ծանրագույն իրավիճակը: Այդ մասին նա գրել է. «Սակայն մի ակնարկ քարտէսի վրայ կը բաւի հասկանալու այն, թէ ինչ է սպասում մեզ… Հայաստանի ռազմագիտական բոլոր կարեւոր կէտերը խլւած են: Նա պաշարւած է մեր դարաւոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրւած է այնպիսի հաշիւներու վրայ, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին՝ յարմար պարագային… ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայութիւնը» [1, էջ 54-55]:

Գարեգին Նժդեհը զորավարական և պետական գործչի իր մեծ փորձով նախազգուշացնում էր տարածաշրջանային այն սպառնալից իրավիճակի մասին, որը ցեղասպան Թուրքիայի և արհեստածին խորհրդային Ադրբեջանի կողմից իրագործվող հակահայկական քաղաքականության հետևանքով ստեղծվել էր հայության համար: Զգո-

նության կոչով դիմելով մտավորականությանը՝ նա գրել է. «Հայաստանը խոցելի է մի շարք տարբեր կէտերից… Թշնամին ունի մեզ բնաջնջելու վճիռ, մենք չունենք ինքնապաշտպանութեան ծրագիր եւ ինքնապաշտպանունակ զէնք» [1, էջ 55]: Գարեգին Նժդեհն ապագան տեսնում էր ինքնապաշտպանական ներուժի հզորացման, ոգեղեն միասնականացման և սեփական շահի գիտակցման ճանապարհով: Գաղափարական ասպարեզում այդ մարմնավորվեց ի դեմս Տարոնականության շարժման:

Գարեգին Նժդեհը, ձգտելով հայրենակիցների մեջ վերականգնել մարտական ոգին, գրել է. «Բարոյա-նիւթական առաջընթաց - ասել է՝ ներոյժ ինքնապաշտպանութիւն: Առաջընթացի հրամայականն է ինքնապաշտպանութիւնը: Այլեւս ոչ ոք է հաւատում… թէ կարելի է կանգնեցնել առաջընթացի յաղթական կառքը՝ գետինը փռուած պարտուածների եւ թոյլերի հառաչանքներով: Այլեւս ոչ ոքի համար է գաղտնիք, թէ պետութիւնները բնական հակառակորդներ են, որոնցից ամէն մէկը ձգտում է տարածուել, ուժեղանալ, շահել իր հարեւանների հաշւին: Յարձակւում է նա, ով իրեն ուժեղ եւ պատրաստ է զգում յարձակւելու՝ լաւագոյն պաշտպանողականը համարելով նախայարձակողականը: Յարձակւում է նա, ով իր դիմացը թուլութիւն է տեսնում: Ամէն մի ժողովուրդ, երկաթէ անհրաժեշտութիւնից մղւած, նախապատրաստւում է, անում այն, ինչ որ անում են բոլորը: Թոյլը սարսափում է՝ չլինի թէ կուլ գնայ ուժեղին, իսկ ուժեղը արթուն հսկում է, որ իր հակառակորդը չգերազանցէ իրեն: Եւ խաղաղապաշտ ու անարի ժողովուրդները տկարանում են եւ դառնում որսը նրանց, որոնց ոյժը աճում է եւ ծաւալւում անդիմադրելիօրէն» [1, էջ 55-56]:

Գարեգին Նժդեհը, XX դարի 20-30-ական թվականների աշխարհաքաղաքական իրողություններից ելնելով, միջազգային ասպարեզում՝ միջպետական հարաբերություններում տիրող երկու հիմնական սկզբունքների է անդրադարձել, գրելով. «Հասկանանք եւ հետեւեալը.

- Յանուն խաղաղութեան չեն կնքում պայմանագրերը, այլ յանուն պետութիւնների օրւայ կենսական շահերի:

- Պետութիւնները հաշւի են առնում միջազգային իրաւունքը եւ յարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյութիւն ունեցող դրութիւնից. սակայն հենց որ մի այլ դրութիւն, հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց աւելի շահավէտ թւաց՝ նրանք թքում են պայմանագրերի վրայ, լքում իրենց նախկին զինակիցներին եւ սպառնում աշխարհի խաղաղութեան: Այս է իրերի առարկայական դրութիւնը, այս է իրական աշխարհը…» [1, էջ 56]:

Գարեգին Նժդեհը, մատնացույց անելով ուղղակի սպառնալիքները, նախազգուշանում էր. «Թշնամին հսկում է ոչ միայն գերեզմանացած Արևմտյան Հայաստանի, այլեւ Խորհրդային Հայաստանի խաղաղութեան վրայ: Ամէն րոպէ նա կարող է խանգարել այդ խաղաղութիւնը եւ եթէ մինչեւ այժմ չփորձեց խանգարել – դա նշանակում է, թէ այդպէս աւելի է նպաստաւոր իր քաղաքական նպատակների համար» [1, էջ 57]:

Գարեգին Նժդեհն իր «Բաց նամակներում» մտորելով հայկական անկախ պետության վերականգնման և հայրենադարձության մասին, գրել է. «Ներկայ Հայաստանը կազմում է հազիւ 1/12-ը մեր պատմական Հայրենիքի… Դա հայրենի անկիւն է: Այժմ իր սահմաններում նա չի կարող տեղ տալ ի սփիւռս աշխարհի ցաք ու ցրիւ եղած հայրենազուրկ հայութեան՝ գաղութահայութեան, որի թափառիկ վիճակն աղետաւոր է երկու տեսակէտից. նախ, որ նա ենթակայ է ստոյգ կորստեան, օրինակ՝ Թուրքիայում՝ կոտորածի, այլ վայրերում՝ խաղաղ բնաջնջումի, ձուլումի… Մի ճակատագիր, որ երկմտութեան և տատանումի է մատնել մեր ժողովուրդը, այսինքն՝ ազգային յոռետեսութեան: Իսկ վայ այն ժողովուրդին, որ վարակւած է այս հիվանդութեամբ, այդպիսին կանգնած է գերեզմանի ափին: Չսարսափի՛նք, բայց եւ առանց սին պատրանքների եւ աւելորդ նախապաշարումների ընդունենք այդ դառնադառն ճշմարտութիւնը – մեր ապագան վտանգւած է» [1, էջ 57-58]:

Գարեգին Նժդեհը կարևորել է պատմական անցյալից դասեր քաղելը՝ ազգի կյանքում առաջընթացն ապահովելու համար: Ուստի, ապազային սպառնացող վտանգը զգալով՝ նա նշել է. «Անիմաստ կը լինէր այս ճշմարտութիւնն ընդունիլ, եթէ դա մեզ միայն սարսափի պիտի մատնէ և ոչ ցնցէ… Աղետաւոր է զուր կորուստներ ունենալը, այսինքն՝ անցեալի դէպքերից խրատուիլ, փորձուիլ, սթափուիլ չիմանալը. պարզ՝ աղետաւոր է վերազնահատումների անընդունակ լինելը: Առանց վերազնահատումի՝ անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների՝ ոչ թէ միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ եւ հենց իրենք՝ ժողովուրդները»: Ինքնաճանաչումը, պատմական փոփոխվող իրավիճակներում ազգային կյանքի ընթացքի վերիմաստավորումը նկատի ունենալով՝ Գարեգին Նժդեհը գրել է. «Վերազնահատումի պիտի ենթարկենք ոչ միայն դէպքերի առարկայական բնոյթը, այլ մանաւանդ մեր հոգեւոր կեանքի ենթակայական տարրերը: Պիտի որոնենք, փնտրենք, գտնենք մեր դժբախտութեանց իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը…» [1, էջ 58]:

Գարեգին Նժդեհը, բարձր գնահատելով հայ ժողովրդի ստեղծագործ արգասիքները, փրկության միակ միջոցը համարել է Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ լինելը: Նա գրել է. «Մի աշխատասէր եւ նիւթական ապազայի համար այնքան ձիրքերով օժտուած ժողովուրդ, որ նիւթական բարիքներ կուտել եւ ամբարել գիտէ տարւայ բոլոր եղանակների համար, որ ծիծաղելի կը համարէ, եթէ մէկը ամռան միայն արեւի գեղեցկութեամբ հիանայ եւ չմտածէ ձմռան մասին - զարմանալիօրէն իդէալիստ է դէպի խաղաղութիւնը, աղօթում է նրա արեւին եւ բնաւ չի հաւատում, թէ պատերազմի ձմեռ կայ: Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր ցանկութեան, որովհետեւ հակամարտութեան օրէնքն է կառավարում աշխարհը…Մենք կուզէինք, որ մեր ժողովուրդը եւս վերջապէս ըմբռնէր, թէ խաղաղութիւնը ոչ թէ յաւերժական չէ, այլ ժամանակաւոր զինադադար միայն…» [1, էջ 56]:

Հաղթանակի հասնելու համար հոգեպես բարձրանալու անկյունաքարը համարելով ինքնադաստիարակությունը՝ Գարեգին Նժդեհը գրել է. «Անհատ թէ ժողովուրդ – սրանք միշտ էլ աւելի ուժեղ են, քան կարիքը, քան վտանգը, քան թշնամին - սրանք միշտ էլ կարող են գերազանցել իրենց, բարձրանալ իրենցից, եթէ սրանց չի պակասում սեփական ուժերով ոտքի կանգնելու կամքը… Վաղը յաղթելու է նա, որը մինչ այդ վաղը իր հոգու մեջ կը տանի յաղթանակը: Հասկանանք, հարազատենք այս ճշմարտութիւնը եւ աշխատենք վաղւայ համար – եթէ չենք ուզում կորչել որպէս ազգ» [1, էջ 71-73]:

Գարեգին Նժդեհի խոսքերը դեպի ապագան՝ համայն հայության ուղղված կոչ է՝ միասնականորեն դիմակայելու ազգի առաջ ծառացած մարտահրավերներին:

Աղբյուրներ և գրականություն

1. *Գարեգին Նժդեհ,* Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Բեյրութ, 1929 (*Գ.Նժդեհ,* Հատընտիր, Երևան, 2006, էջ 53-73):
2. *Юрий Барсегов,* "Преступный сговор"– Анив, 2006, N 2. http://aniv.ru/archive/31/prestupnyj-sgovor-jurij-barsegov/
3. *Ара Папян,* Экспертиза Московского российско-турецкого договора (16 марта 1921 г.) согласно международному праву. http://pandukht.livejournal.-com/208428.html
4. *Юрий Барсегов,* "Преступный сговор"– Анив, 2006, N 3. http://aniv.ru/archive/32/prestupnyj-sgovor-prodolzhenie-jurij-barsegov/
5. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т. I, Составитель, ответственный редактор, автор вступительной статьи и комментария д. ю. н., проф. Ю.Г. Барсегов, М., 2008.
6. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т. II, Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; М., 2009.
7. *Ա.Մելքոնյան,* Ջավախքը XIX դարում և XX դ. առաջին քառորդին, Երևան, 2003:
8. *Վ.Ղազախեցյան,* Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006:
9. *Արմենակ Մանուկյան,* Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.,Երևան, 1999:
10. *Ստեփան Ստեփանյանց,* Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:

ԼՈՒՐԵՐ

Թուրքիայում տեղի է ունեցել հայալեզու «Լույս» երկշաբաթաթերթի շնորհանդեսը

Թուրքիայում ապրիլի 30-ից ընթերցողների դատին է հանձնվել հայալեզու «Լույս» երկշաբաթաթերթը: Թուրքական «Դողան» գործակալության փոխանցմամբ՝ ապրիլի 29-ին, Ստամբուլի *Istanbul WOW* հյուրանոցում տեղի է ունեցել «Լույս» երկշաբաթաթերթի շնորհանդեսը, իսկ ապրիլի 30-ից այն արդեն հասանելի է եղել ընթերցողներին: Ավելի վաղ, թուրքական *Taraf*-ի հետ զրույցում «Լույս»-ի գլխավոր խմբագիր Շահնուր Քազանչըն հայտնել էր, որ նոր երկշաբաթաթերթը ուշադրության կենտրոնում է պահելու Թուրքիայի հայկական, ասորական և հունական համայնքներում տեղի ունեցող իրադարձություններն ու զարգացումները՝ չանտեսելով նաև մյուս ազգային և կրոնական փոքրամասնություններին: «Մեր նոր թերթը լույս է տեսնելու 15 օրը մեկ և ունենալու է 28 էջ, որոնցից մեկը կլինի հայերեն: Մենք ունենք բաժանորդագրության համակարգ, սակայն երկշաբաթաթերթը վաճառքում կլինի նաև կրպակներում: Այս պահին արդեն 800 բաժանորդ ունենք»,- ասել է «Լույս»-ի գլխավոր խմբագիրը:

http://news.am/arm/news/151545.html

Նոր սփյուռքի որոնումներ. գիտաժողով Լոս Անջելեսում

Ապրիլի 27-ին Լոս Անջելեսում տեղի է ունեցել «Անկախություն և անդին. 1991-ից հետո ձևավորված հայկական նոր սփյուռքի որոնումներ» թեմայով համաժողով, որը կազմակերպել էր ՀՅԴ ԱՄՆ Արևմտյան շրջանի վարչությունը՝ Հարավային Կալիֆորնիայի համալսարա-

նի Հայագիտության ինստիտուտի և *The Armenian Review* հանդեսի համատեղ հովանավորությամբ: Միջոցառմանը շուրջ մեկ տասնյակ գիտնականներ խոսել են տեղեկատվության փոխանակման քաղաքականության, «սփյուռք» հասկացության վերասահմանման և Հայաստան վերադարձի վերաձևակերպման մասին: Գիտաժողովի որոշ ելույթներից հատվածներ կարող եք գտնել հետևյալ հղումներով.

http://civilnet.am

Պատրաստվել է Հայոց ցեղասպանության լուսանկարների և մասնագիտական քարտեզների թվայնացված ալբոմ

Մեծ եղեռնի հարյուրերորդ տարելիցին ընդառաջ ԱՄՆ Հայկական համագումարը (*AAA*), Հայկական ազգային ինստիտուտը (*ANI*) և Միացյալ Նահանգների Հայոց ցեղասպանության թանգարանը պատրաստել են Հայոց ցեղասպանության լուսանկարների և մասնագիտական քարտեզների թվայնացված ալբոմ: Ալբոմին կից ներկայացված են նաև Ցեղասպանության վերաբերյալ պատմական տեղեկություններ: Այն հնարավոր է ներբեռնել ԱՄՆ Հայկական համագումարի և ԱՄՆ Հայկական ազգային ինստիտուտների կայքից *PDF* ձևաչափով: Ինչպես տեղեկացնում են Հայկական համագումարի վաշինգտոնյան կենտրոնակայանից, ալբոմը տպվել և գործածվում է ամերիկյան Քոնեկթիկուտ նահանգի համալսարանում, իսկ Հայ ազգային ինստիտուտի նախագահ Վան Գրիգորյանի խոսքով՝ ալբոմի հանդեպ հետաքրքրություն կա նաև Միացյալ Նահանգներից դուրս գտնվող կրթական կենտրոններում: Լուսանկարներն արվել են հիմնականում ավստրիացի և գերմանացի, այսինքն՝ Օսմանյան պետության դաշնակից երկրների լուսանկարիչների կողմից, Հալեպում, Դեր Զորում, Էրզրումում, Երզնկայում և այլ կենտրոններում, նշում է ամերիկահայ պատմաբան, ալբոմի հեղինակ Ռուբեն Ադալյանը:

http://www.nt.am/am/news/180646/

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 23.05.2013թ.
Թիվ 5 (38), 2013թ.
Տպաքանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 3 մամուլ:
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: